վերջույթների օրթոպեդիկ և անոթային վիրահատությունների ժամանակ: Հետազոտությունների մի մասում հայտնաբերվում է արյան կորստի նվազում [2, 10, 15], իսկ մյուս մասում՝ տարբերություն չի առաջանում [33]: Կատարված մետավերլուծություններում արյան կորստի տարբերությունները ՌԱ-ի և ԸԱ-ի միջև վիճակագրորեն հավաստի են [8, 9], բայց կլինիկորեն ոչ նշանակալի: Միջողնային աճառի ճողվածքը հեռացնելիս ՌԱ-ի դեպքում արյան կորուստը պակաս է միջինը 53 մլ-ով [8], որը, իհարկե, որևէ կլինիկական նշանակություն չի կարող ունենալ: Այնուամենայնիվ, ավելի մեծ ծավալով վիրահատությունների ժամանակ տարբերությունը կարող է ավելի մեծ լինել, որը հնարավոր կլինի պարզել հետագա հետազոտությունների ժամանակ:

Վիրահատության, անզգայացման և հիվանդանոցում լինելու տևողությունը

Վիրահատության, անզգայացման, ինչպես նաև հիվանդանոցում լինելու ընդհանուր տևողության կրճատումը ժամանակակից առողջապահության հրատապ հրամայականն է: Միջողնային աճառի ճողվածքը հեռացնելու ժամանակ ՌԱ-ի ենթադրյալ թերություններից է անզգայացման իրականացման ավելի երկար տևողությունը: Կատարվել են բազմաթիվ հետազոտություններ [2, 15, 21, 23, 26, 29], որոնցում համեմատվել են անզգայացման, վիրահատության, անզգայացումից վերականգնման տևողությունը, հետվիրահատարանում անցկացրած ժամանակը և հիվանդանոցում անցկացրած մահճակալ-օրերի քանակը ՌԱ-ի և ԸԱ-ի դեպքում: Նշված հետազոտություններում կիրառված ժամանակային ցուցանիշները, օրինակ՝ անզգայացման, վիրահատության սկիզբն ու ավարտը նշող ժամանակները տարբերվում են, որը դժվարացնում է նրանց համեմատումը և տվյալների վերլուծությունը: Պետք է նշել նաև, որ վերոնշյալ տվյալները պայմանավորված են վիրաբույժի ու անեսթեզիոլոգի փորձառությամբ և աշխատաոճով, ինչպես նաև տվյալ հիվանդանոցում ընդունված մոտեցումներով: Համաձայն Դե Ռոժասի և ուրիշների մետավերլուծության [9]՝ վիրահատության ժամանակը ՌԱ-ի դեպքում ավելի կարճ է [15, 21, 23] կամ հավասար [2, 26, 29] ԸԱ-ի համեմատ, բայց հավաստիորեն ոչ ավելի երկար: Ընդհանուր հիվանդանոցային մահճակալ-օրերն ավելի քիչ են ՌԱ-ի, քան ԸԱ-ի դեպքում [8]: Տևողության տեսանկյունից անզգայացման քննարկվող երկու տեսակների ավելի հստակ և ճշգրիտ համեմատություն կատարելու նպատակով անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ՝ ավելի հստակ չափանիշներով: Ներկայումս Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում սույն հոդվածի հեղինակների կողմից անցկացվում է նման հետազոտություն, որի արդյունքները կհրապարակվեն հետազոտության ավարտից և տվյալների համապատասխան մշակումից հետո:

Սրտխառնոց և փսխում

Հետվիրահատական սրտխառնոցը և փսխումը մեծացնում են ստամոքսի պարունակությունը շնչուղիներում հայտնվելու (ասպիրացիայի) վտանգը, երկարացնում են հիվանդի հետանզգայացման սրահից հիվանդասենյակ տեղափոխելու ժամանակը և հիվանդների մեծ մասի դեպքում առաջացնում են զգալի տհաճություն և անհարմարություն: Ընդհանրապես, ԸԱ-ի դեպքում սրտխառնոցի և փսխման վտանգը 5 անգամ ավելի մեծ է, քան ՌԱ-ի դեպքում [31], որը հիմնականում պայմանավորված է ներշնչառական անեսթետիկների և օփիոիդների՝ սրտխառնոց և փսխում առաջացնող հատկությամբ: Միջողնային աճառի ճողվածքը հեռացնելու դեպքում նույնպես մեծաթիվ հետազոտություններում ցույց է տրվում, որ ԸԱ-ից հետո ավելի հավանական է սրտխառնոցի և կամ փսխման զարգացումը [3, 7, 14, 15, 16, 17, 36]: Որոշ հետազոտողներ, սակայն, չեն հայտնաբերել էական տարբերություն սրտխառնոցի և փսխման առաջացման հաճախականության միջև ՌԱ-ի և ԸԱ-ի դեպքում [2, 29] միջողնային աճառի ճողվածքը հեռացնելու ժամանակ: Պապադոպուլոսի և ուրիշների հետազոտության մեջ [26] ԸԱ-ի դեպքում սրտխառնոց և փսխում դիտվել է վիրահատվողների 71%-ի, իսկ ՌԱ-ի դեպքում՝ 20%-ի շրջանում: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ նշված վիրահատությունների ժամանակ սրտխառնոց և կամ փսխում ավելի հաճախ առաջանում է ԸԱ-ի, քան ՌԱ-ի դեպքում:

Հետվիրահատական ցավ և ցավազրկողների պահանջ

Միջողնային աճառի ճողվածքի հեռացման վիրահատությունից հետո հետվիրահատական ցավը բավական ուժգին է և կարող է տևել մինչև չորս օր [5]: Համաձայն վերջին տարիներին կատարված հետազոտությունների՝ ՌԱ-ի դեպքում հետվիրահատական ցավը գնահատված ցավի գնահատման թվային սանդղակի կամ տեսողական անալոգային սանդղակի միջոցով հավաստիորեն ավելի քիչ է, քան ԸԱ-ի դեպքում՝ ընդհուպ հետվիրահատական 24 ժամը [3, 7, 14, 15, 17, 34, 36]: Շատ հետազոտություններում ցույց է տրվում, որ ՌԱ-ի դեպքում պակասում է նաև օփիոիդների կիրառումը հետվիրահատական շրջանում

[2, 7, 14, 15, 29]: Կան նաև հետազոտություններ, համաձայն որոնց՝ հետվիրահատական ցավը նույնն է ՈԱ-ի և ԲԱ-ի դեպքում [26], սակայն կատարված մետավերլուծություններով, այնուամենայնիվ, եզրակացվում են, որ ցավի ուժգնության և օպիոիդների պահանջի պակասումը ՈԱ-ի դեպքում հավաստի է [8, 9, 37]: Այս արդյունքը կարելի է բացատրել ՈԱ-ի կանխարգելիչ ազդեցությամբ, որը սենսիտիզացիա չի առաջացնում՝ նախապես պաշարելով նոցիցեպտիվ ուղիները, ինչպես նաև մնացորդային անզգայացմամբ, որը վաղ հետվիրահատական շրջանի ուժգին ցավերի ժամանակ ապահովում է բավարար ցավազրկում [2]:

Հետվիրահատական միզակապություն

Հետվիրահատական միզակապությունը (ՀՄ) վիրահատությունից հետո միզարձակման անհնարինությունն է՝ չնայած լցված միզապարկին: Այն բավական հաճախադեպ բարդություն է և կարող է դիտվել 5-70% դեպքերում՝ պայմանավորված վիրահատության և անզգայացման տեսակով, և առավել հաճախադեպ է ՈԱ-ի, քան ԲԱ-ի դեպքում [4]: Սակայն կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ միջողնային աճառի ճողվածքը հեռացնելու ժամանակ հետվիրահատական միզակապության հաճախությունը չի տարբերվում ՈԱ-ի և ԲԱ-ի դեպքում [3, 7, 14, 15, 17, 36]: Օրինակ՝ Ջելիշի և ուրիշների հետազոտության [15] ընթացքում ՈԱ-ից հետո միզակապություն զարգացել է հիվանդների 14,8%-ի, իսկ ԲԱ-ից հետո՝ 22,9%-ի դեպքում, սակայն տարբերությունը վիճակագրորեն հավաստի չի եղել: Նման արդյունքները, ամենայն հավանականությամբ, պայմանավորված են նրանով, որ ՀՄ-ի առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները բազմագործոնային են, և ներկայումս կիրառվող կարճատև ազդեցություն ունեցող ժամանակակից դեղամիջոցները և մոտեցումները ինչ-որ չափով նվազեցնում կամ նույնիսկ չեզոքացնում են ՈԱ-ի և ԲԱ-ի միջև եղած տարբերությունները:

Վիրահատության արժեք

Ժամանակակից առողջապահական համակարգերում ցանկացած միջամտության արժեք էական նշանակություն ունի այդ միջամտության գործնական ներդրման և կիրառման հաճախականության առումով, քանի որ սահմանափակ պաշարների ճիշտ կառավարումը կարող է նպաստել առավել մեծաքանակ մարդկանց օգնություն տրամադրելուն: Համաձայն որոշ հետազոտությունների՝ միջողնային ճողվածքի հեռացման ժամանակ ՈԱ-ի դեպքում ինչպես անզգայացման, այնպես էլ ամբողջ վիրահատության ծախսերն ավելի քիչ են, քան ԲԱ-ի դեպքում [34, 36]: Օրինակ՝ Վուրալի և ուրիշների կատարած հետազոտությունում [36] ՈԱ-ի դեպքում անզգայացման ծախսերը կազմել են 155±8,75 ԱՄՆ դոլար, ընդհանուր վիրահատական ծախսերը՝ 196±39,1 ԱՄՆ դոլար, իսկ ԲԱ-ի դեպքում՝ համապատասխանաբար՝ 476,81±16,67 և 511,93±44,67 ԱՄՆ դոլար: Պետք է նկատել, որ վերոնշյալ գները տարբերվում են երկրից երկիր, քաղաքից քաղաք և նույնիսկ հիվանդանոցից հիվանդանոց՝ պայմանավորված դեղերի և այլ միջոցների հասանելիությամբ, ինչպես նաև անձնակազմի վարձատրության տարբերություններով:

Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում սույն հոդվածի հեղինակների կողմից կատարված հետազոտության [35] արդյունքները ևս ցույց են տալիս, որ միջողնային աճառի ճողվածքի հեռացման վիրահատության դեպքում ՈԱ-ն ֆինանսապես զգալիորեն մատչելի է ԲԱ-ի համեմատ: Այսպես՝ ՈԱ-ի դեպքում անզգայացմամբ ուղղակիորեն պայմանավորված ծախսերը եղել են 72,2%-ով պակաս, ուղղակի վիրաբուժական ծախսերը՝ 12,6%-ով, հետանզգայացման սրահի ծախսերը՝ 44,2%-ով, իսկ ընդհանուր վիրահատական ծախսերը՝ 43%-ով պակաս, քան ԲԱ-ի դեպքում: Այսպիսով, ՈԱ-ի դեպքում կատարվող միջողնային ճողվածքի հեռացման վիրահատությունը ֆինանսապես ավելի մատչելի է, քան ԲԱ-ի դեպքում:

Հիվանդի և վիրաբույժի գոհունակությունը

Վերջին տարիներին ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում հիվանդի և վիրաբույժի գոհունակության հանգամանքին, որը, սակայն, դժվար է ուսումնասիրել ապացուցողական բժշկության չափանիշների կիրառմամբ, քանի որ գոհունակության աստիճանը ինքնին սուբյեկտիվ է: Դե Քասսայի և ուրիշների կողմից կատարված մետավերլուծությունում [8] մեծ կարևորություն է տրվում այս խնդրին, որը ցույց է տալիս, որ հիվանդներն ավելի գոհ են ՈԱ-ից ու ավելի հաճախ ընտրում են այն [2, 3, 36]: Սակայն շատ վիրաբույժներ, այնուամենայնիվ, նախընտրում են ԲԱ-ն [17, 29, 37]: Ատտարի և ուրիշների հետազոտությունը ցույց է տալիս, որ ՈԱ-ից գոհ է եղել հիվանդների 100%-ը, իսկ ԲԱ-ից՝ միայն 67,6%-ը: Սադրոլսադատի հետազոտությունում [29] ԲԱ-ից գոհ է եղել վիրաբույժների 76,7%-ը, իսկ ՈԱ-ից՝ ընդամենը 64,0%-ը: Հիվանդների կողմից ՈԱ-ի ընտրությունը հետազոտողները համարում են տրամաբանական և կանխատեսելի, քանի որ այդ դեպքում հիվանդները չեն ենթարկվում ընդհանուր անզգայացման, ավելի քիչ ցավ և սրտխառնոց և կամ փսխում են ունենում

[2, 3, 7, 17, 36]: Վիրաբույժների առավելապես ԸԱ-ի ընտրությունը ենթադրաբար բացատրվում է նրանով, որ վիրահատության ժամանակը սահմանափակված է ՈԱ-ի տևողությամբ, հիվանդի շարժումները կարող են խանգարել վիրաբույժին, ինչպես նաև հնարավոր չէ վիրահատությունից անմիջապես հետո ստուգել նյարդաբանական պակասուրդի (դեֆիցիտի) առկայությունը կամ բացակայությունը [8]: Մեր հանրապետությունում անզգայացման ընտրության վրա երբեմն ազդում են նաև այլ գործոններ, օրինակ՝ հասարակության մեջ շատերի դեպքում առկա են վախեր՝ պայմանավորված ՈԱ-ի դեպքում կատարվող «ողնաշարի ծակմամբ», հետագայում մեջքի՝ մշտապես պահպանվող ցավերով և նյարդաբանական այլ բարդություններով, իսկ վիրաբույժների մոտեցումները, սովորությունները, փորձառությունը տարբերվում են այլ երկրներում աշխատող իրենց գործընկերների մոտեցումներից: Հետևաբար, վերը նշված հետազոտությունների տվյալները չի կարելի միանշանակորեն ընդունել և վերագրել մեր երկրում առկա իրողությանը: Անհրաժեշտ են մանրազնին ուսումնասիրություններ՝ մեր հանրապետությունում հիվանդների և վիրաբույժների նախընտրություններն ու գոհունակության աստիճանը պարզելու նպատակով:

Քննարկում

Վերը նշված հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ողնաշարի գոտկային հատվածում միջողնային աճառի ճողվածքը հեռացնելու դեպքում ՈԱ-ն ունի որոշակի առավելություններ ԸԱ-ի նկատմամբ: Ինչպես նշվեց, ՈԱ-ի դեպքում հիվանդի արյան շրջանառությունն ավելի կայուն է. արյան ճնշման բարձրացումն ու հաճախասրտությունն ավելի հազվադեպ են, ինչպես նաև հետվիրահատական ցավը, ցավազրկողների պահանջը, սրտխառնոցը և կամ փսխումն ավելի քիչ են, քան ԸԱ-ի դեպքում: ՈԱ-ն նաև ֆինանսապես ավելի մատչելի է ըստ ինչպես մեր, այնպես էլ այլոց կողմից իրականացված հետազոտությունների: Հիվանդները ևս ավելի գոհ են ողնուղեղային անզգայացումից և առավելապես նախընտրում են անզգայացման այս տեսակը, ի տարբերություն վիրաբույժների, որոնք նախապատվությունը տալիս են ընդհանուր անզգայացմանը: Արյան կորուստը, ՀՄ-ն, արյան ճնշման անկման ու հազվասրտության դրվագները, ինչպես նաև վիրահատության, անզգայացման և հիվանդանոցում լինելու տևողություններն առկա հետազոտությունների տվյալներով գրեթե նույնն են անզգայացման երկու տեսակների կիրառման դեպքում:

Սակայն դեռևս կան ուսումնասիրության ենթակա բազմաթիվ խնդիրներ: Ինչպես արդեն նշվեց, ամենահաճախ կիրառվող տեղային անէսթետիկը բուպիվակաինի 0,5%-անոց լուծույթն է, սակայն դեռևս ապացուցված չէ իզոբար կամ հիպերբար դեղաձևերից որևէ մեկի առավելությունը: Որոշ հետազոտողներ նշում են, որ իզոբար բուպիվակաինով հնարավոր չէ ստանալ անզգայացման համապատասխան մակարդակ, իսկ պաշարումն անվստահելի ու անկանխատեսելի է [15], մյուսները, ընդհակառակը, ցույց են տալիս, որ իզոբար բուպիվակաինն ավելի նախընտրելի է, քանի որ առաջացնում է երկարատև պաշարում, ինչպես նաև ՄԶՃ-ի անկումը հազվադեպ է [33]: Այս հարցը պարզաբանելու համար անհրաժեշտ են հետագա հետազոտություններ: Չկան ուսումնասիրություններ, թե արդյոք հիվանդի շարժումները վիրահատության ընթացքում ազդո՞ւմ են նյարդաբանական և այլ բարդությունների առաջացման հաճախականության վրա: Նաև չկան ապացույցներ, թե արդյոք տարբերվո՞ւմ են մահացությունը, հիվանդացությունը և հեռակա բարդությունները ՈԱ-ի և ԸԱ-ի դեպքում [6]:

Այսպիսով, մասնագիտական գրականության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ողնուղեղային անզգայացումը կարող է անվտանգ կիրառվել միջողնային աճառի ճողվածքը հեռացնելու դեպքում: Սակայն միևնույն ժամանակ առկա են բազմաթիվ թերի ուսումնասիրված, չպարզաբանված կամ ընդհանրապես չուսումնասիրված խնդիրներ, որոնք լուծելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ապացուցողական հետազոտություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Arts M.P., Kur umovi A., Miller L.E. et al. Comparison of treatments for lumbar disc herniation: Systematic review with network meta-analysis. Medicine (Baltimore). 2019;98(7)
2. Attari M.A., Mirhosseini S.A., Honarmand A., Safavi M.R. Spinal anesthesia versus general anesthesia for elective lumbar spine surgery: a randomized clinical trial. J. Res. Med. Sci., 2011;16:524–9
3. Baenziger B.; Nadi N.; Doerig R., Proemmel P., Gahl B.; Hodel D., Hausmann O.N. Regional Versus General Anesthesia: Effect of Anesthetic Techniques on Clinical Outcome in Lumbar Spine Surgery: A Prospective Randomized Controlled Trial. J. Neurosurg. Anesthesiol., 2020, 32, 29–35
4. Baldini G., Bagry H., Aprikian A., Carli F. Postoperative urinary retention: anesthetic and perioperative considerations. Anesthesiology, 2009 May;110(5):1139-57
5. Bianconi M., Ferraro L., Ricci R., Zanoli G., Antonelli T., Giulia B., Guberti A., Massari L. The pharmacokinetics and efficacy of ropivacaine continuous wound instillation after spine fusion surgery. Anesth. Analg., 2004, 98, 166–172
6. Chen H.T., Tsai C.H., Chao S.C., Kao T.H., Chen Y.J., Hsu H.C., Shen C.C., Tsou H.K. Endoscopic discectomy of L5-S1 disc herniation via an interlaminar approach: prospective controlled study under local and general anesthesia. Surg. Neurol. Int., 2011;2:93
7. Chowdhury M.S., Roy S.S., Rahman M.M., Hossain M.M., Alim S. Comparative study in prolapse lumbar intervertebral disc (PLID) surgery by spinal vs general anaesthesia. J. Bangladesh. S. Anesth., 2010, 23, 47–50.
8. De Cassai A., Geraldini F., Boscolo A., Pasin L., Pettenuzzo T., Persona P., Munari M., Navalesi P. General Anesthesia Compared to Spinal Anesthesia for Patients Undergoing Lumbar Vertebral Surgery: A Meta-Analysis of Randomized Controlled Trials. J. Clin. Med., 2020 Dec 30;10(1):102
9. De Rojas J.O., Syre P., Welch W.C. Regional anesthesia versus general anesthesia for surgery on the lumbar spine: a review of the modern literature. Clin. Neurol. Neurosurg., 2014;119:39-43
10. Demirel C.B., Kalayci M., Ozkocak I., Altunkaya H., Ozer Y., Acikgoz B. A prospective randomized study comparing perioperative outcome variables after epidural or general anesthesia for lumbar disc surgery. J. Neurosurg. Anesthesiol., 2003;15:185–192
11. Ditzler J.W., Dumke P.R., Harrington J.J., Fox J.D. Should spinal anesthesia be used in surgery for herniated intervertebral disk. Anesth. Analg., 1959 Mar-Apr;38(2):118-24
12. Ehrlich G.E., Khaltaev N.G. Low back pain initiative. Geneva: World Health Organization; 1999
13. Frymoyer J.W. Back pain and sciatica. N. Engl. J. Med., 1988;318:291–300
14. Hussain Z.; Ghaffar A.; Mushtaq M.J.; Qasmi S.A. Can spinal anaesthesia be a routine for single level lumbar discectomy? Pak. Armed. Forces Med. J. 2015, 65, 397–401
15. Jellish W.S., Thalji Z., Stevenson K., Shea J. A prospective randomized study comparing short-and intermediate-term perioperative outcome variables after spinal or general anesthesia for lumbar disk and laminectomy surgery. Anesth. Analg., 1996 , 83, 559–564
16. Kahveci K., Doge C., Ornek D., Gokcinar D., Aydemir S., Ozay R. Perioperative outcome and cost-effectiveness of spinal versus general anesthesia for lumbar spine surgery. Neurol. Neurochir. Pol., 2014, 48, 167–173
17. Kara I., Celik J.B., Bahar O.C., Apillio˘gullari, S., Karabagli H. Comparison of spinal and general anesthesia in lumbar disc surgery. J. Neurol. Sci., 2011, 28, 487–496
18. Kleinstueck F.S., Fekete T., Jeszenszky D., Mannion A.F., Grob D., Lattig F., Mutter U., Porchet F: The outcome of decompression surgery for lumbar herniated disc is influenced by the level of concomitant preoperative low back pain. Eur. Spine J., 20: 1166-1173, 2011
19. Lund P.C. Hypobaric pontocaine spinal anesthesia for exploration for extruded nucleus pulposus. Curr. Res. Anesth. Analg., 1948 Nov-Dec;27(6):301-13
20. Mauermann W.J., Shilling A.M., Zuo Z. A comparison of neuraxial block versus general anesthesia for elective total hip replacement: a meta-analysis. Anesth. Analg., 2006;103:1018–1025
21. McLain R.F., Bell G.R., Kalfas I., Tetzlaff J.E., Yoon H.J. Complications associated with lumbar laminectomy: a comparison of spinal versus general anesthesia. Spine, 2004;29:2542–7
22. McLain R.F., Kalfas I., Bell G.R., Tetzlaff J.E., Yoon H.J., Rana M. Comparison of spinal and general anesthesia in lumbar laminectomy surgery: a case-controlled analysis of 400 patients. J. Neurosurg., Spine, 2005;2:17–22
23. McLain R.F., Tetzlaff J.E., Bell G.R., Uwe-Lewandrowski K., Yoon H.J., Rana M. Microdiscectomy: spinal anesthesia offers optimal results in general patient population. J. Surg. Orthop. Adv., 2007;16:5–11
24. Modig J., Karlstrom G. Intra- and post-operative blood loss and haemodynamics in total hip replacement when performed under lumbar epidural versus general anaesthesia. Eur. J. Anaesthesiol., 1987;4:345–355
25. Nitikman G. Spinal anesthesia for operation on the vertebral column. Curr. Res. Anesth. Analg., 1946 Mar-Apr;25:52-7
26. Papadopoulos E.C., Girardi F.P., Sama A., Pappou I.P., Urban M.K., Cammisa F.P. Lumbar microdiscectomy under epidural anesthesia: a comparison study. Spine J., 2006 Sep-Oct;6(5):561-4
27. Rodgers A., Walker N., Schug S., McKee A., Kehlet H., van Zundert A., Sage D., Fut- ter M., Saville G., Clark T., MacMahon S. Reduction of postoperative mortality and morbidity with epidural or spinal anaesthesia: results from overview of randomised trials. Br. Med. J. (Clin. Res. Ed.) 2000;321:1493
28. Rosenberg M.K., Berner G. Spinal anesthesia in lumbar disc surgery. Review of 200 cases with a case history. Anesthesia and Analgesia 1965; 44: 419–23
29. Sadrolsadat S.H., Mahdavi A.R., Moharari R.S., Khajavi M.R., Khashayar P., Najafi A., Amirjamshidi A. A prospective randomized trial comparing the technique of spinal and general anesthesia for lumbar disk surgery: a study of 100 cases. Surg. Neurol., 2009;71:60–5
30. Scott N.B., Kehlet H. Regional anaesthesia and surgical morbidity. Br. J. Surg., 1988;75:299–304
31. Sinclair D.R., Chung F., Mezei G. Can postoperative nausea and vomiting be predicted? Anesthesiology, 1999, 91, 109–118
32. Sztark F. Exposure to general anaesthesia could increase the risk of dementia in elderly. Euroanaesthesia, 2013;18A:P11–4
33. Tetzlaff J.E., Dilger J.A., Kodsy M., Al-Bataineh J., Yoon H.J., Bell G.R. Spinal anesthesia for elective lumbar spine surgery. .J Clin. Anesth., 1998;10:666–9
34. Ulutas M. et al. General versus epidural anesthesia for lumbar microdiscectomy. J. Clin. Neurosci., 2015
35. Varosyan A., Aghasaryan N., Aghakaryan V. Spinal vs general anesthesia for lumbar microdiscectomy: cost comparison analysis. European Journal of Anaesthesiology, V. 37, June 2020, e-Supplement 58, p. 465
36. Vural C.Y. Comparison of patient satisfaction and cost in spinal and general anesthesia for lumbar disc surgery. Turk. Neurosurg., 2014, 24, 380–384
37. Zorrilla-Vaca A., Healy R.J., Mirski M.A. A Comparison of Regional versus General Anesthesia for Lumbar Spine Surgery: A Meta-Analysis of Randomized Studies. J. Neurosurg. Anesthesiol., 2017, 29, 415–425

РЕЗЮМЕ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СПИНАЛЬНОЙ И ОБЩЕЙ АНЕСТЕЗИЙ ПРИ ОПЕРАЦИЯХ НА ПОЗВОНОЧНИКЕ. ОБЗОР ЛИТЕРАТУРЫ

Агасарян Н.С., Варосян А.Ф., Мангоян А.Н., Манукян А.М., Анджелова Д.А.
ЕГМУ им. М. Гераци, Кафедра анестезиологии и интенсивной терапии последипломного образования

Ключевые слова: *позвоночная хирургия, межпозвоночная дискэктомия, спинальная анестезия, общая анестезия.*

Некоторые виды хирургических вмешательств на позвоночнике, в частности, удаление грыжи межпозвоночного диска в поясничном отделе разными методами могут быть выполнены в условиях как общей, так и разных видов регионарной анестезий, включая спинальную, эпидуральную, комбинированную спинально-эпидуральную анестезии с применением седации или без нее. Из методов регионарной анестезии при удалении грыжи межпозвоночного диска самое широкое распространение имеет спинальная анестезия, которая применяется при операциях на позвоночнике с середины прошлого столетия. Преимущества спинальной анестезии по сравнению с общей эндотрахеальной анестезией при операциях на нижних конечностях и тазовых органах доказаны в научной литературе, тем не менее спинальная анестезия применяется гораздо реже при операциях на поясничном отделе позвоночника по сравнению с общей анестезией.

Цель настоящего исследования – анализировать научные данные, относящиеся к применению общей эндотрахеальной и спинальной анестезий при проведении хирургических вмешательств на поясничном отделе позвоночника, опубликованные в наиболее популярных электронных базах данных-PubMed, Scopus, Google Scholar, Web of Science, и сравнить эти два вида анестезий при удалении грыжи межпозвоночного диска в поясничном отделе с точки зрения следующих критерий: гемодинамическая стабильность и кровопотеря во время, и после операции; длительность операции, анестезиологической процедуры и пребывания в больнице; частота послеоперационной тошноты, рвоты, задержки мочи; выраженность послеоперационной боли; необходимость в обезболивающих препаратах; стоимость хирургического лечения; степень удовлетворенности больного и хирурга.

Анализ изученной литературы показывает, что хирургические вмешательства по удалению грыжи межпозвоночного диска в поясничном отделе разными методами, включая микродискэктомию и эндоскопическую дискэктомию, могут быть выполнены в условиях спинальной анестезии, которая по сравнению с общей анестезией, обеспечивает более стабильную гемодинамику, удовлетворительное послеоперационное обезболивание, в том числе меньшую необходимость в анальгетиках, а также менее частое возникновение послеоперационной тошноты и рвоты. По мнению некоторых исследователей, спинальная анестезия при удалении грыжи межпозвоночного диска в поясничном отделе связана со значительно меньшими общими финансовыми затратами по сравнению с таковыми при общей анестезии, включая затраты, непосредственно связанные с процедурой анестезии и стоимостью послеоперационного ведения больного. Пациенты больше удовлетворены спинальной анестезией и чаще предпочитают этот вид анестезии в отличие от хирургов, которые в большинстве рассмотренных исследований предпочитают выполнять операции по поводу грыжи межпозвоночного диска в поясничном отделе под общей анестезией. Интраоперационная кровопотеря, частота возникновения послеоперационной задержки мочи, а также длительность анестезиологической процедуры и пребывания в больнице одинаковы при обоих видах анестезий.

Однако, остается ряд нерешенных проблем, требующих дальнейшего изучения. Наиболее часто используемым местным анестетиком является 0,5% раствор бупивакаина, однако, до сих пор нет исследований, представляющих преимущества изобарического либо гипербарического растворов указанного анестетика. Некоторые исследователи считают, что адекватный уровень спинальной блокады не может быть надежно достигнут при использовании изобарического раствора бупивакаина, в то время как другие исследователи утверждают, что изобарический раствор предпочтительнее благодаря обеспечению большей продолжительности блока наряду с меньшей частотой снижения артериального давления. Это противоречие требует дальнейших исследований для определения оптимального вида раствора бупивакаина для спинальной анестезии при подобных хирургических вмешательствах. Также не было обнаружено исследований, свидетельствующих о влиянии двигательной активности пациента во время операции на частоту развития неврологических и других хирургических осложнений. Нет данных, демонстрирующих разницу в смертности, заболеваемости и развитии отдаленных осложнений после спинальной или общей анестезий при операциях на позвоночнике.

На основе анализа литературных данных можно заключить, что удаление грыжи межпозвоночного диска в поясничном отделе может быть безопасно выполнено в условиях спинальной анестезии, однако все еще существует ряд недостаточно или вовсе неизученных проблем, требующих дальнейших научных исследований.

SUMMARY

COMPARATIVE ANALYSIS OF SPINAL AND GENERAL ANESTHESIA IN SPINE SURGERY. REVIEW OF LITERATURE

Aghasaryan N.S., Varosyan A.F., Mangoyan H.N., Manukyan A.M., Anjelova D.A.
YSMU after M. Heratsi, Department of Anesthesiology and Intensive Care of Post-Diploma Education

Keywords: *spine surgery, intervertebral discectomy, microdiscectomy, spinal anesthesia, general anesthesia.*

Certain types of spine surgery particularly lumbar disc herniation removal by different surgical methods can be performed under general anesthesia, as well as under different types of regional anesthesia, including spinal, epidural, combined spinal-epidural anesthetic techniques, with or without sedation. The most widely used type of regional anesthesia for lumbar disc surgery is the spinal anesthesia, which has been used for spine surgery since the middle of last century. The advantages of spinal anesthesia over general endotracheal anesthesia are well demonstrated in the scientific literature for the surgery of lower extremities and pelvic organs. However, the spinal anesthesia is used much less frequently for lumbar spine surgery in comparison with general anesthesia. The aim of this study is to review the scientific publications regarding the use of general endotracheal and spinal anesthesia for lumbar spine surgery in the most popular electronic databases, such as PubMed, Scopus, Google Scholar, Web of Science and to compare these two types of anesthesia in lumbar spine surgery from the point of view of the following criteria: intra- and postoperative hemodynamic stability, blood loss, duration of surgery, anesthetic procedure and hospital stay, severity of postoperative pain and requirements in analgesics, incidence of postoperative nausea and vomiting, postoperative urinary retention, cost of surgical treatment as well as patient and surgeon satisfaction.

The analysis of the reviewed literature shows that the lumbar disc surgery by different methods, including microdiscectomy, endoscopic discectomy, can be performed under spinal anesthesia, which provides more stable hemodynamic parameters, good postoperative pain relief, less requirements in postoperative analgesics, lower incidence of postoperative nausea and vomiting than general anesthesia. According to some researchers, spinal anesthesia for lumbar discectomy is associated with significantly lower total financial cost as compared to general anesthesia, including the cost directly related to the anesthetic procedure and post anesthesia care unit (PACU) related cost. This analysis shows that spinal anesthesia is less costly than general anesthesia when used in patients undergoing lumbar discectomy, in addition, it contributes to the reduction of other non-anesthesia related costs and overall cost of treatment. Patients are more satisfied by spinal anesthesia and prefer this type of anesthesia more often unlike surgeons, who in the majority of reviewed investigations prefer to perform lumbar disc surgery under general anesthesia. Intraoperative blood loss, incidence of postoperative urinary retention, as well as the duration of anesthetic technique and the length of hospital stay are the same in both types of anesthetic techniques.

However, there are still a number of unsolved problems requiring further research. The most frequently used local anesthetic is 0.5% solution of bupivacaine. However, up to date no study has clearly demonstrated the advantages of its either isobaric or hyperbaric solution. Some researchers find that an adequate spinal block cannot be reliably achieved by bupivacaine isobaric solution, oppositely, other researchers demonstrate that isobaric solution is preferable due to the longer duration of block with less frequent decrease of blood pressure. This controversy requires further research to determine the optimal type of bupivacaine solution for spinal anesthesia in lumbar disc surgery. No studies have been found to show the influence of the patient movements during the surgery on the incidence of neurologic and other complications of surgery. There is no evidence demonstrating the difference of mortality, morbidity and remote complications after spinal or general anesthesia in spine surgery.

On the basis of this literature data analysis a conclusion can be made that the lumbar disc surgery can safely be performed under spinal anesthesia. Meantime, there are a number of insufficiently investigated problems or certain problems not investigated at all requiring further evidence-based research.

ՀՏԴ՝ 616.8_092:612.8

ՀՈՏԱՌԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅԻՆ ԴԻՍՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ ՄԻ ՇԱՐՔ ՊԱԹՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Գալստյան Լ.Ս.
ԵՊԲՀ, նյարդաբանության ամբիոն, «Մուրացան» համալսարանական հիվանդանոց

Ստացված է՝ 21.09.2021, գրախոսված է՝ 18.10.2021, ընդունված է՝ 27.10.2021

Բանալի բառեր՝ *հոտ, համ, նյարդային համակարգ, ախտաբանական վիճակներ, նյարդադեգեներատիվ հիվանդություններ, հոգեկան խանգարումներ, դեղերի ընդունում, կորոնավիրուս:*

Շրջակա միջավայրի քիմիական միացություններն ընկալելու ունակությունը կոչվում է հոտառություն: Հոտավետ նյութերի հետագա քիմիական վերլուծության ճանապարհով օրգանիզմը որոշում է դրանց կենսաբանական նշանակությունը, այսինքն՝ կատարվում է հոտառական փոխազդում: Համի նորմալ ընկալման վրա ազդում են տարբեր նեյրոֆիզիոլոգիական վիճակները, որոնք ներառում են էնդոկրին գործառույթը, հույզերը և նույնիսկ ուտելու նկատմամբ վերաբերմունքն ու սպասելիքները:

Ըստ մասնագիտական գրականության աղբյուրների՝ համի (հիպոգեուզիա, ագեուզիա) և հոտառության (հիպօսմիա, անօսմիա) խանգարումներով պայմանավորված՝ ախտաբանական վիճակները հայտնաբերելու համար անհրաժեշտ է լավագույնս տիրապետել կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի գործառութային անատոմիային [43]:

Համաձայն մի շարք հեղինակների կարծիքի՝ վերջին տարիներին որոշակի հետաքրքրություն է առաջացել համի և հոտառության խանգարումների նկատմամբ, մասնավորապես արդեն իսկ կատարված համաճարակաբանական տվյալները ցույց են տալիս, որ դրանց տարածվածությունն ազգաբնակչության շրջանում բավականին քիչ է, սակայն համի և հոտի շեմային զգայունության սպեցիֆիկ թեստերի կիրառումը հնարավորություն է տալիս բացահայտելու հիպօսմիայի և անօսմիայի բավական տարածված լինելը որոշ խմբերի, հատկապես տարեցների շրջանում [3]:

*** ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ**

Լ.Ս. Գալստյան
ԵՊԲՀ, նյարդաբանության ամբիոն
Հասցե՝ *ՀՀ, Երևան, 0025,Կորյունի 2*
Էլ. փոստ՝ *galstyanlilit@ymail.com*
Հեռ.՝ *(+374) 93 08 66 43*

Հոտի և համի խանգարումները կարող են զգալի ազդեցություն ունենալ մարդկանց կյանքի որակի վրա [46]:

Չնայած բազմաթիվ հետազոտությունների՝ կան մի շարք տեխնիկական դժվարություններ հոտառական և համային գրգռիչները վերահսկելու հարցում: Համեմատաբար քիչ բան է հայտնի հոտի և համի խանգարումների պատճառների և հնարավոր բուժման մասին, երբ դա համեմատվում է տեսողության և լսողության խանգարումների ըմբռնման հետ [26]:

Հոտի և համի խանգարումների հետազոտության մեթոդաբանության մասին

Նյարդաբանական խորհրդատվություն իրականացվում է համի և հոտառության խանգարումների ուղղակի պատճառները պարզելու համար, ընդ որում՝ ընդունված է, որ առաջին քայլը տվյալ անձի մանրամասն զննումն ու անամնեստիկ տվյալների հավաքագրումն է: Հարկ է նշել, որ մարդու օրգանիզմում ծայրամասային հոտառական հատվածը քթի խոռոչում է և ընդգրկում է միջին խեցին, վերին խեցին՝ միջնապատի հանդիպակաց հատվածն ու քթի թաղը [1, 2]: Հոտառական գործառույթի ֆիզիկական հետազոտությունն առաջնահերթ ներառում է քթի խոռոչի էնդոսկոպիկ հետազոտությունը, մասնավորապես անհրաժեշտ է ուսումնասիրել հոտառական հատվածը, տվյալ շրջանում առկա պոլիպների կամ այտուցի առկայությունը, որոնք կարող են արգելափակել հոտի մոլեկուլների մուտքը հոտառական էպիթել. դա նշանակում է, որ հոտառության գործառույթն անհետանում է, բայց շնչառական ունակությունն անվնաս է [8, 11]:

Հոտառության և համային ունակության ստուգումը

Հոտառությունը ստուգելու նպատակով հիվանդին առաջարկվում է հոտ քաշել մի շարք բուրավետ նյութերից: Այդ նյութերի հետ հիվանդը նախկինում պետք է շփված լինի: Պետք է խուսափել սուր հոտով նյութերից, որոնք գրգռում են ոչ միայն հոտառական ընկալիչները, այլև քթի լորձաթաղանթը նյարդավորող եռվորյակ նյարդի վերջավորությունները: Այդ դեպքում

գերակշռում է ցավի զգացողությունը:

Կլինիկայում հոտառական գործառույթն ուսումնասիրելու համար օգտվում են հետազոտման որակական մեթոդից. հետազոտելու ընթացքում հիվանդը փակում է աչքերը, բերանը և քթանցքերից մեկը: Այնուհետև հոտավետ նյութը մոտեցվում է մյուս քթանցքին: Քանակական հետազոտման նպատակով կիրառվում է օլֆակտոմետր, որի միջոցով որոշում են հոտի ընկալման համար անհրաժեշտ նյութի նվազագույն քանակը:

Համային զգացողությունն ընկալվում է երեք գանգուղեղային նյարդերով:

Լեզվի լորձաթաղանթին սփռված են համային ընկալիչները [1]: Լեզվի լորձաթաղանթի առաջնային 2/3-ի զգացողությունն ապահովում է դիմային նյարդի հատուկ համազգաց բաժինը, հետին 1/3-ը՝ լեզվաըմպանային նյարդը: Համի զգացողության գրգիռները աքսոններով հաղորդվում են երկարավուն ուղեղ՝ մենավոր ուղու կորիզ, որը ընդհանուր է դիմային նյարդի հետ մեկտեղ: Կորիզներում տեղակայված համի զգացողությունների երկրորդ նեյրոնների աքսոնները նույն և հակառակ կողմերի միջային ժապավեններով մտնում են տեսաթմբի կորիզներ: Այստեղ առկա երրորդ նեյրոնների աքսոններն անցնում են ներքին պատիճի հետին ոտիկով և ճաճանչաձև պսակով ու վերջանում կեղևային պրոյեկցիոն գոտիներում՝ հետկենտրոնական գալարի ստորին հատվածում՝ կղզյակի հարևանությամբ (ապահովում է համի զգացողությունը):

Թափառող նյարդը նույնպես պարունակում է սակավաթիվ համազգաց թելեր, որոնք վերջանում են մակկոկորդի լորձաթաղանթում: Պայմանավորված ախտաբանական օջախի տեղակայմամբ՝ կարող են առաջանալ համային զգացողության զանազան աղավաղումներ [20, 38]:

Փորձարարական ճանապարհով հաստատվել է, որ համի և հոտառական անալիզատորները որոշակիորեն ազդում են գունազգացողության, լսողության և այլ զգայությունների շեմի վրա: Համի և հոտառության բացակայության դեպքում դանդաղում է մտածողությունը [31]:

Համային և հոտառության խանգարումների սահմանումը

Ագեուզիան համային ունակության լիակատար, իսկ հիպոգեուզիան՝ մասնակի կորուստն է: Հիպերգեուզիան վերաբերում է համային արտահայտված զգայունությանը: Համի խանգարման ամենատարածված համախտանիշը դիսգեուզիան է՝ անբավարար համային զգացողությունը: Համային գրգռիչներն ընկալվում են նորմայից այլ կերպ, հաճախ նաև որպես մետաղական կամ դառը համ: Համի կամ հոտի զգայապատրանքները (հալյուցինացիաները) նկարագրվում են էպիլեպսիայի և շիզոֆրենիայի դեպքում, քաղցր դիսգեուզիան երբեմն նշվում է որպես թոքերի ուռուցքների առաջին նշան [29]:

Կա հոտառության թուլացում՝ հիպօսմիա, լրիվ բացակայություն՝ անօսմիա, և ուժգնացում՝ հիպերօսմիա, որոնք լինում են երկկողմանի կամ միակողմանի: Հոտառության երկկողմանի խանգարումները հիմնականում պայմանավորված են քթի խոռոչի և անցուղիների լորձաթաղանթների հիվանդություններով կամ բնածին են և կարող են լինել ծայրամասային կամ կենտրոնական հոտառական նևրոնի ապլազիայի, հիպոպլազիայի դեպքում: Երկկողմանի հիպօսմիայի պատճառ կարող են դառնալ նաև որոշ քրոնիկական հիվանդություններ, մասնավորապես շաքարային դիաբետը, հիպոթիրեոզը, սկլերոդերմիան և մի շարք դեղամիջոցների երկարատև կիրառումը [35]:

Հոտառության խանգարումները նեյրոդեգեներատիվ հիվանդությունների դեպքում

Հոտառության խանգարումները կարող են առաջանալ կենտրոնական նյարդային համակարգի խանգարումների սկզբնական փուլերում, ինչպիսիք են ցրված սկլերոզը, Պարկինսոնի և Ալցհեյմերի հիվանդությունները [4, 13, 34]:

Դա հաճախ կատարվում է հիվանդությանը բնորոշ ախտանշանների ի հայտ գալուց շատ առաջ, և հիվանդը կարող է որևէ ուշադրություն չդարձնել հոտառության շեմի նվազմանն ու չդիմել բժշկի: Օրինակ՝ պարկինսոնիզմի դրսևորումներով հիվանդների միայն 3,3%-ն է, որ հոտառությամբ պայմանավորված խնդիրներ չունի: Մեծամասնության հոտառությունը նվազում է կամ ընդհանրապես անհետանում [17]:

Ալցհեյմերի հիվանդության առաջին նշանների դեպքում կորչում է հոտերն ընկալելու ընդհանուր ունակությունը, իսկ հետագա փուլերում մարդը դադարում է դրանք տարբերակելուց: Ցրված սկլերոզի դեպքում հոտառությունը նվազում է մարդկանց մոտ մեկ երրորդի դեպքում և ժամանակի ընթացքում պրոգրեսիվում է [47]:

Սակավ են ուսումնասիրությունները, թե ինչու են նեյրոդեգենարատիվ հիվանդությունները վաղ ազդում հոտառության համակարգի վրա: Աղքատ են նաև տվյալներն այն մասին, թե ինչ ախտաբանական մեխանիզմներ են պատասխանատու հոտառության խանգարումների համար [17, 36]:

«Հոտառություն» տերմինն ունի մի քանի նշա-

նակություն՝ հոտի հայտնաբերում, հոտի ճանաչում, հոտի հիշողություն և հոտի նույնականացում: Հոտառության դիսֆունկցիան զարգանում է ենթադրյալ առողջ տարեցների 6–16%-ի շրջանում նորմալ ծերացմանը զուգահեռ: Տարեց մարդիկ, որոնք ենթադրում են, թե իրենք առողջ են, բայց ունեն հոտառության խանգարում, կարող են լինել չբացահայտված նեյրոդեգեներատիվ հիվանդության վաղ փուլում: Նեյրոդեգեներատիվ հիվանդությունների դեպքում հոտառության դիսֆունկցիա ունեցող մարդկանց տեսակարար կշիռը, պայմանավորված հիվանդության տեսակով, հաճախ կարող է գերազանցել 90%-ը: Ենթադրվում է, որ հոտառության գործառույթը ստուգելու թեստերը Պարկինսոնի և Ալցհեյմերի հիվանդությունների դեպքում ախտորոշման չափորոշիչ են: Հոտառության շեմի նվազումը Պարկինսոնի հիվանդության ամենավաղ նյարդաբանական նշաններից մեկն է, անգամ կարող է նախորդել դասական շարժողական պակասուրդի (դեֆիցիտի) առաջացմանը [9, 37]:

Հոգեկան խանգարումներով պայմանավորված հոտառության աղավաղումներ

Որպեսզի մարդիկ լիարժեք զգան հոտը, պետք է ներգրավվեն տարբեր գործառույթներ ունեցող բազմաթիվ կառույցներ: Հույզերի և հոտի ընկալման համար պատասխանատու գոտիները լրացնում են միմյանց, ուստի դրանցից որևէ մեկի ընկճումը կարող է հանգեցնել ծանոթ բույրերի աղավաղմանը: Օրինակ՝ ծանր դեպրեսիայի ժամանակ հաճելի բույրերն ընկալվում են տհաճ և ավելի ուժգին:

Երկբևեռ խանգարումների դեպքում մարդուն կարող են հետապնդել անսովոր հոտեր, օրինակ՝ փտած մսի, ցեխի, որոնք, կարծես, ոչ մի տեղից էլ չեն հայտնվում: Շիզոֆրենիայի դեպքում հոտերը կարող են լինել ծանծրալի կամ, ընդհակառակը, ուժգին [10]:

Համի խանգարումները՝ պայմանավորված դեղ ընդունելով

Հոտի կորուստը կողմնակի ազդեցություն է, որը գրանցվել է ավելի քան 250 դեղամիջոցներ ընդունելու ժամանակ: Մի շարք դեղամիջոցներ, հատկապես հակահիպերտոնիկ և հակահիստամինային միջոցները երբեմն կարող են ունենալ այս ազդեցությունը: Դա հիմնականում պայմանավորված է անոթասեղմիչ հատկություններով: Քթի հյուսվածքները բավարար չափով չեն հագենում արյունով, և դրանց զգայունությունը նվազում է:

Ըստ մասնագիտական գրականության տվյալների՝ վերը նշված տեսակետից որոշ դեղամիջոցներ մտահոգում են բժիշկներին: Օրինակ՝ ԱՄՆ բժշկական ոլորտում տարիներ շարունակ տարածայնություններ են առաջացել՝ պայմանավորված ցինկ պարունակող սպրեյների կիրառմամբ: Երկու տարի առաջ FDA-ն (U.S. Food and Drug Administration՝ ԱՄՆ սննդի և դեղերի վարչություն) առաջարկել է վերացնել ցինկ պարունակող դեղերի կիրառումը հոտառության մշտական կորստի տասնյակ հաղորդումների պատճառով [17]:

Հոտի և համի դիսֆունկցիան կորոնավիրուսով հիվանդների շրջանում

Մասնագիտական գրականության տվյալների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոտառության դիսֆունկցիան (կոչվում է նաև հետվիրուսային անօսմիա)՝ վերին շնչուղիների վիրուսային վարակների հետևանք է [15]:

Քթի խոռոչի էպիթելի ախտահարումը և կենտրոնական նյարդային համակարգի ներգրավումը կորոնավիրուսային վարակում կարող են լինել հոտի և համի դիսֆունկցիայի զարգացման հավանական պատճառներ, բայց ճշգրիտ ախտածագումը դեռևս լիարժեք պարզաբանված չէ: Համի և հոտառության խանգարումների առաջացումը կարող է զարգանալ հանկարծակի կամ դանդաղ [21, 50]:

Մինչ օրս հրատարակված աշխատանքներում նշվում է կորոնավիրուսային վարակ արձանագրած գրեթե բոլոր երկրներում անօսմիայի, հիպօսմիայի համատարած տարածվածության մասին, ընդ որում՝ հաստատվել է ընդգծված կորելյացիոն կապի առկայությունը COVID-19-ի, համի և հոտառական խանգարումների միջև: Ինչ վերաբերում է համի խանգարմանը, ապա հարկ է ընդգծել, որ կորոնավիրուսով հիվանդների 76%-ի շրջանում հոտառության դիսֆունկցիան դրսևորվում է սուր և կտրուկ, նրանց գրեթե 3/4-ը նշում է համի յուրահատուկ զգացողություն, օրինակ՝ երբ խնձորի հոտը հիվանդները շփոթում են սոխի հետ [14, 36]:

Դեռևս 2007-ին կենդանիների վրա կատարված ուսումնասիրություններում ցույց են տրվել, որ տարբեր վիրուսներ (ռինովիրուս, պարագրիպ, Էպշտեյն-Բարի վիրուս և այլն) կարող են վնաս հասցնել հոտառության կենտրոնական ուղիներին և գլխուղեղի այլ կենտրոններին:

Ըստ մասնագիտական գրականության մի շարք աղբյուրների [44]՝ COVID-19 վիրուսի տեղաշարժը դեպի գլխուղեղ կատարվում է մաղոսկրի ծակոտկեն թիթեղի միջոցով, որը մոտ է հոտառական կոճղեզին, ըստ այդմ էլ դա այն մեխանիզմներից մեկն է, որը հնարավորություն է տալիս վիրուսին հասնելու և ազդելու

գլխուղեղի վրա:

Նյարդաբանական դիտարկումները COVID-19-ով վարակված նորածինների և երեխաների շրջանում

COVID-19 համաճարակն արագորեն և լայնորեն տարածվել է ամբողջ աշխարհում, դեպքերը շարունակում են շատանալ տագնապալի տեմպերով: Առաջին դեպքը արձանագրվել է 2019-ի դեկտեմբերի 19-ին Չինաստանի Հեբոյ նահանգի Ուհան քաղաքում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) պայմանավորված բռնկումը 2020-ի հունվարի 30-ին հայտարարել է հանրային առողջապահության տեսակետից միջազգային նշանակություն ունեցող արտակարգ իրավիճակ, 2020թ. փետրվարի 19-ին ԱՀԿ-ն այս հիվանդությունն անվանել է COVID-19, իսկ 2020թ. մարտի 11-ին ԱՀԿ-ն որոշում է ընդունել, որ բռնկումը պանդեմիայի բնույթ ունի, իսկ մարտի 13-ին հայտարարել է, որ պանդեմիայի կենտրոնը Եվրոպան է (www.cdc.gov):

Կարճ ժամանակահատվածում PubMed-ի «որոնում» բաժնում տպագրված զեկույցների քանակն արդեն հասել է 132.086–ի [9 մայիսի 2021 թ.], իսկ այդ մեջբերումներից միայն զեկույցների 1,5-3%-ը վերաբերում են նորածիններին և երեխաներին:

Մինչ օրս COVID-19-ի դեպքերի մոտ 2-5%-ում ներառվում են հիմնականում թոքային ախտանշաններ ունեցող երեխաները, սակայն դեռահասների շրջանում նորածնային և մանկահասակ երեխաների համեմատ հիվանդության ընթացքը սովորաբար ավելի մեղմ է: Այնուամենայնիվ, մի շարք գիտնականների կարծիքով՝ թերագնահատվում է երեխաների շրջանում նյարդաբանական ներգրավվածությունը, ընդ որում՝ նրանք նշում են, որ, ամենայն հավանականությամբ, նյարդաբանական դրսևորումներն ունեն ավելի լայն սպեկտր՝ պայմանավորված մինչև վերջ չհստակեցված երկարաժամկետ հետևանքներով [12, 45, 49, 51]:

Հարկ է նշել, որ դեռևս չկան հստակ օրինաչափություններ հղի կանանց և նորածինների վերաբերյալ, հղի հիվանդ, առավել ևս վիրուսակիր մորից իր պտղին SARS-CoV-2 ուղղահայաց փոխանցում: Դեռևս լիարժեք պարզաբանված չեն մի շարք խնդիրներ, օրինակ՝ շատ դեպքերում հիվանդության ախտանշաններն արձանագրվում են նորածնային շրջանում, սակայն անհայտ է մնում՝ երբ է SARS-CoV-2-ը փոխանցվում նրան՝ անմիջապես ծնվելու՞ ժամանակ, թե՞ ոչ: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ, ըստ մի շարք գիտնականների տվյալների, վիրուսը կարող է վարակված մորից ներարգանդային ճանապարհով փոխանցվել պտղին [22, 41]:

Աշխարհում շարունակվող կորոնավիրուսի համաճարակը հսկայական և աննախադեպ մարտահրավերներ է նետել բժշկական բոլոր մասնագետներին: Նորածինների և երեխաների շրջանում COVID-19-ով պայմանավորված նյարդաբանական դրսևորումները համեմատաբար հազվադեպ են, այնուհանդերձ այս տարիքային շրջանում նյարդաբանական դիսֆունկցիայով պայմանավորված հաղորդումները շատանում են [25]:

Չնայած այն հանգամանքին, որ COVID-19-ի ախտանշանները հիմնականում վերաբերում են թոքերի ախտահարմանը, ավելի ու ավելի ակնհայտ է դառնում բազմաթիվ օրգան-համակարգերի՝ ներառյալ գլխուղեղի դիսֆունկցիան: COVID-19-ով հիվանդների շրջանում նյարդային համակարգի ախտահարում արձանագրված է ավելի քան 36% դեպքերում [6, 23, 28, 32, 48]:

Կորոնավիրուսը, լինելով նեյրոտրոպ վիրուս, տարբերվում է իր ինվազիվությամբ, վիրուլենտությամբ և բորբոքում առաջացնելու հակումով, կարող է միաժամանակ ախտահարել ծայրամասային և կենտրոնական նյարդային համակարգերը:

Որպես նեյրոինվազիվ վիրուս՝ այն ունակ է մուտք գործելու և ներթափանցելու նյարդային համակարգ՝ վարակելով նյարդային բջիջները, պատճառ դառնալով ախտաբանական պրոցեսների զարգացման և նյարդաբորբոքային մեխանիզմով առաջացնելու երկրորդային բորբոքային պատասխան նյարդային համակարգի ներսում [5]:

Երեխաների շրջանում գերակշռող նյարդաբանական դրսևորումներից է գլխուղեղի խոշոր անոթների խցանումներից առաջացած իշեմիկ կաթվածը, որը պայմանավորված է նորածնի օրգանիզմում զարգացած պրոթրոմբոտիկ վիճակով և անոթների էնդոթելի բորբոքումով [7, 30]:

COVID-19-ով հիվանդ երեխաների շրջանում էնցեֆալիտի առաջացումը դեռևս վիճահարույց է, քանի որ SARS-CoV-2-ը հայտնաբերված չէ ողնուղեղային հեղուկում, և ընդհանուր առմամբ դասական էնցեֆալիտիկ ախտանշանները դրսևորվում են երբեմն [33]:

Ցնցումներ նկարագրված են COVID-19-ով հիվանդների շրջանում 1%-ից քիչ դեպքերում, ընդ որում՝ նոպաներով մի քանի դեպքեր հիմնականում հաղորդվում են կլինիկական բնույթի զեկուցումներում, սակայն ախտածագման մեխանիզմները դեռևս հստակեցված չեն [24, 42]:

Երեխաների շրջանում ամենատարածված

ախտանշաններից են համի (հիպոգեուզիա կամ ագեուզիա) և հոտի (հիպօսմիա կամ անօսմիա) շեմքային նվազումը: Հոտի և համի անկումը երեխաների շրջանում հաճախ դրսևորվում է որպես առաջին ախտանշան և կորոնավիրուսային հիվանդության մեղմ տեսակների դեպքում [16, 27, 40]:

Ամփոփում և կանխատեսում

Հոտի և համի խանգարումները կարող են զգալի ազդեցություն ունենալ կյանքի որակի վրա: Վերջին տարիներին մշակվել են հոտառության և համային ունակությունները ստուգելու վավեր և հուսալի մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս մանրամասն ուսումնասիրելու այդ զգայարանները:

Հոտի և համի խանգարումների բուժական միջցառումներին վերաբերող հետազոտությունները շարունակվում են, սակայն դրանք ռանդոմիզացված չեն, անգամ կարելի է նշել, որ բուժման արդյունքների տեսակետից լիարժեք տարանջատված չէ հոտի և համի խանգարումների ախտադադարը (ռեմիսիան) սպոնտան լավացումից: Բուժման համար առանձնահատուկ նշանակություն ունի հոտառական էպիթելի վերականգնման ունակությունը [18, 19]:

Բուժական մոտեցումներով կարող են շտկվել նյութափոխանակության խանգարումները և սննդային անբավարարությունը, վերացվել վարակները, փոփոխել ընդունվող դեղամիջոցները, կատարել կառուցվածքային խանգարումների վիրաբուժական միջամտություն, կառավարել աուտոիմունային ագրեսիաները և նույնիսկ կայունացնել էլեկտրաքիմիական փոխազդեցությունները [18, 19, 39]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարդու անատոմիա, Կ. Բարոյանի խմբագրությամբ, Երևան, հ. 2, 2017, 364 էջ:
2. Չուքուրյան Ա. Կ., Սարգսյան Գ. Վ., Նահապետյան Ն. Ռ., Մեսրոպյան Հ. Բ., ԼՕՌ օրգանների անատոմիան, ֆիզիոլոգիան, հետազոտման մեթոդները, Մեթոդական ուղեցույց բակալավրիատի ուսանողների համար, Երևան, 2016, 117 էջ:
3. Alan D Gaines Anosmia and hyposmia, , PMID: 20615320 DOI: 10.2500/aap.2010.31.3357.
4. Ansari KA, Johnson A. Olfactory function in patients with Parkinson's disease. J Chron Dis. 1975;28:493–497. doi: 10.1016/0021-9681[75]90058-2.
5. Atluri V.S.R., Hidalgo M., Samikkannu T., Kurapati K.R. et al Synaptic Plasticity and Neurological Disorders in Neurotropic Viral Infections. Neural Plast. 2015;2015:1–14. doi: 10.1155/2015/138979.
6. Baig A.M., Khaleeq A., Ali U., Syeda H. Evidence of the COVID-19 Virus Targeting the CNS: Tissue Distribution, Host–Virus Interaction, and Proposed Neurotropic Mechanisms. ACS Chem. Neurosci. 2020;11:995–998. doi: 10.1021/acschemneuro.0c00122.
7. Beyrouti R.E., Adams M., Benjamin L., Cohen H. et al Characteristics of ischaemic stroke associated with COVID-19. J. Neurol. Neurosurg. Psychiatry. 2020;91:889–891. doi: 10.1136/jnnp-2020-323586.
8. Biacabe B, Faulcon P, Amanou L, Bonfils P. Olfactory cleft disease: an analysis of 13 cases. Otolaryngol Head Neck Surg. 2004;130:202–208. doi: 10.1016/j.otohns.2003.09.002.
9. Braak H, Del Tredici K, Rub U, de Vos RA. et al Staging of brain pathology related to sporadic Parkinson's disease. Neurobiol Aging. 2003;24:197–211. doi: 10.1016/S0197-4580[02]00065-9.
10. Concepci Marin, Dolores Vilas, Crist bal Langdon, Isam Alobid et al Olfactory Dysfunction in Neurodegenerative Diseases, , PMID: 29904888 DOI: 10.1007/s11882-018-0796-4
11. Damm M, Eckel HE, Streppel M, Jungeh Ising M, Stennert E. Abh ngigkeit des uni- und bilateralen Riechverm gens von der nasalen Str mung bei Patienten mit chronischer Rhinosinusitis. HNO. 2000;48:436–443. doi: 10.1007/s001060050594.
12. Dong Y., Mo X., Hu Y., Qi X. et al Epidemiology of COVID-19 among Children in China. Pediatrics. 2020;145:e20200702. doi: 10.1542/peds.2020-0702.
13. Doty RL, Deems D, Steller S. Olfactory dysfunction in Parkinson's disease: A general deficit unrelated to neurologic signs, disease stage, or disease duration. Neurology. 1988;38:1237–1244.
14. Duncan HJ. Postviral olfactory loss. Seiden A M ed, Taste and Smell Disorders 1997; New York:Thieme, 72–78.
15. Erdem Atalay Cetinkaya Coincidence of COVID-19 Infection and Smell-Taste Perception Disorders, MD, Received 2020 Apr 3; Accepted 2020 Apr 3.
16. Gane S.B., Kelly C., Hopkins C. Isolated sudden onset anosmia in COVID-19 infection. A novel syndrome. Rhinology. 2020;58:299–301. doi: 10.4193/Rhin20.114.
17. Haehner A, Hummel T, Hummel C, Sommer U, Junghanns S. et al Olfactory loss may be a first sign of idiopathic Parkinson's disease. Mov Disorders. 2007;22:839–842. doi: 10.1002/mds.21413.
18. Heckmann SM, Hujoel P, Habiger S, Friess W et al Zinc gluconate in the treatment of dysgeusia – a randomized clinical trial. J Dent Res. 2005;84:35–38. doi: 10.1177/154405910508400105.
19. Henkin RI, Schecter PJ, Friedewald WT, Demets DL, Raff M. A double-blind study of the effects of zinc sulfate on taste and smell dysfunction. Am J Med Sci. 1976;272:285–299. doi: 10.1097/00000441-197611000-00006.
20. Hummel T, Sekinger B, Wolf S, Pauli E, Kobal G. "Sniffin' Sticks": Olfactory performance assessed by the combined testing of odor identification, odor discrimination and olfactory threshold. Chem Senses. 1997;22:39–52. doi: 10.1093/chemse/22.1.39.
21. Hummel T, Whitcroft KL, Andrews P, et al. Position paper on olfactory dysfunction. Rhinol Suppl 2017; 54:1–30.
22. Kirtsman M., Diambomba Y., Poutanen S.M., Malinowski A.K. et al Probable congenital SARS-CoV-2 infection in a neonate born to a woman with active SARS-CoV-2 infection. Can. Med. Assoc. J. 2020;192:E647–E650. doi: 10.1503/cmaj.200821.
23. Koralnik I.J., Tyler K.L. COVID -19: A Global Threat to the Nervous System. Ann. Neurol. 2020;88:1–11. doi: 10.1002/ana.25807.
24. Kuroda N. Epilepsy and COVID-19: Associations and important considerations. Epilepsy Behav. 2020;108:107122. doi: 10.1016/j.yebeh.2020.107122.
25. Lauren L. Jantzie COVID-19: Neurological Considerations in Neonates and Children, Carl E. Stafstrom, Published online 2020 Sep 10. doi: 10.3390/children7090133.
26. Mackay-Sim A, Johnston AN, Owen C, Burne TH. Olfactory ability in the healthy population: Reassessing presbyosmia. Chem Senses. 2006;31:763–771. doi: 10.1093/chemse/bjl019.
27. Mak P.Q., Chung K.-S., Wong J.S.-C., Shek C.-C. et al Anosmia and Ageusia: Not an Uncommon Presentation of COVID-19 Infection in Children and Adolescents. Pediatr. Infect. Dis. J. 2020;39:e199–e200. doi: 10.1097/INF.0000000000002718.
28. Mao L., Jin H., Wang M., Hu Y. et al Neurologic Manifestations of Hospitalized Patients With Coronavirus Disease 2019 in Wuhan, China. JAMA Neurol. 2020; 77:683. doi: 10.1001/jamaneurol.2020.1127.
29. Nakazato Y, Imai K, Abe T, Tamura N, Shimazu K. Unpleasant sweet taste: a

symptom of SIADH caused by lung cancer. J Neurol Neurosurg Psychiatry. 2006;77:405–406. doi: 10.1136/jnnp.2005.073726.
30. Oxley T.J., Mocco J., Majidi S., Kellner C.P. Large-Vessel Stroke as a Presenting Feature of Covid-19 in the Young. N. Engl. J. Med. 2020;382:e60. doi: 10.1056/NEJMc2009787.
31. P J Lillford The impact of food structure on taste and digestibility, Dept of Chemical Engineering, PMID: 27191864 DOI: 10.1039/c5fo01375e.
32. Paterson R.W., Brown R.L., Benjamin L., Nortley R. et al The emerging spectrum of COVID-19 neurology: Clinical, radiological and laboratory findings. Brain. 2020;8:awaa240. doi: 10.1093/brain/awaa240.
33. Pilotto A., Odolini S., Masciocchi S.S., Comelli A. et al Steroid-Responsive Encephalitis in Coronavirus Disease 2019. Ann. Neurol. 2020;88:423–427. doi: 10.1002/ana.25783.
34. Ponsen MM, Stoffers D, Booij J, van Eck-Smit BL et al Idiopathic hyposmia as a preclinical sign of Parkinson's disease. Ann Neurol. 2004;56:173–181. doi: 10.1002/ana.20160.
35. R L pez-Elizalde , A Campero , T S nchez-Delgadillo , Y Lemus-Rodr guez et al Anatomy of the olfactory nerve: A comprehensive review with cadaveric dissection, PMID: 29088516 DOI: 10.1002/ca.23003.
36. Rabin R. Loss of sense of smell may be peculiar clue to coronavirus infection. Available at: https://www.nytimes.com/2020/03/22/health/coronavirus-symptoms-smelltaste.html. Accessed March 22, 2020.
37. Ross GW, Petrovitch H, Abbott R, Tanner CM. et al Association of olfactory dysfunction with risk for future Parkinson's disease. Ann Neurol. 2008;63:167–173.
38. Royet JP, Hudry J, Zald DH, Godinot D, Gregoire MC, Lavenne F, Costes N, Holley A. Functional neuroanatomy of different olfactory judgments. Neuroimage. 2001;13:506–519. doi: 10.1006/nimg.2000.0704.
39. Sakagami M, Ikeda M, Tomita H, Ikui A. et al A zinc-containing compound, Polaprezinc, is effective for patients with taste disorders: randomized, double-blind, placebo-controlled, multi-center study. Acta Otolaryngol. 2008;26:1–6.
40. Sedaghat A.R., Gengler I., Speth M.M. Olfactory Dysfunction: A Highly Prevalent Symptom of COVID-19 with Public Health Significance. Otolaryngol. Neck Surg. 2020;163:12–15. doi: 10.1177/0194599820926464
41. Sisman J., Jaleel M.A., Moreno W., Rajaram V. et al Intrauterine transmission of sars-cov-2 infection in a preterm infant. Pediatr. Infect. Dis. J. 2020;39:2265–2267. doi: 10.1097/INF.0000000000002815.
42. Sohal S., Mansur M., Mossammat M. COVID-19 Presenting with Seizures. IDCases. 2020;20:e00782. doi: 10.1016/j.idcr.2020.e00782.
43. Steven M. Bromley Chapter 19 - Neurolocalization of taste disorders, South Jersey MS Center and Bromley Neurology, PC, Audubon, NJ, United States, Available online 8 October 2019; https://doi.org/10.1016/B978-0-444-63855-7.00019-8.
44. Suzuki M, Saito K, Min WP et al. Identification of viruses in patients with postviral olfactory dysfunction. Laryngoscope 2007; 117:272–277.
45. Tezer H., Demirda T.B. Novel coronavirus disease [COVID-19] in children. Turk. J. Med Sci. 2020;50:592–603. doi: 10.3906/sag-2004-174.
46. Thomas Hummel, Basile N. Landis and Karl-Bernd H ttenbrink Smell and taste disorders. GMS Curr Top Otorhinolaryngol Head Neck Surg. 2011; 10: Doc 04. Published online 2012 Apr 26. doi: 10.3205/cto000077.
47. Wilson RS, Arnold SE, Schneider JA, Boyle PA et al Olfactory impairment in presymptomatic Alzheimer's disease. Ann N Y Acad Sci. 2009;1170:730–735. doi: 10.1111/j.1749-6632.2009.04013.x.
48. Wu Y., Xu X., Chen Z., Duan J. et al Nervous system involvement after infection with COVID-19 and other coronaviruses. Brain Behav. Immun. 2020;87:18–22. doi: 10.1016/j.bbi.2020.03.031.
49. Wu Z., McGoogan J.M. Characteristics of and Important Lessons From the Coronavirus Disease 2019 [COVID-19] Outbreak in China. JAMA. 2020;323:1239. doi: 10.1001/jama.2020.2648.
50. Yamagishi M, Fujiwara M, Nakamura H. Olfactory mucosal findings and clinical course in patients with olfactory disorders following upper respiratory viral infection. Rhinology 1994; 32:113–118.
51. Zimmermann P., Curtis N. Coronavirus Infections in Children Including COVID-19. Pediatr. Infect. Dis. J. 2020;39:355–368. doi: 10.1097/INF.0000000000002660.

РЕЗЮМЕ:

ОБОНЯТЕЛЬНЫЕ И ВКУСОВЫЕ ДИСФУНКЦИИ ПРИ НЕКОТОРЫХ ПАТОЛОГИЧЕСКИХ СОСТОЯНИЯХ

Галстян Л.С.
ЕГМУ, Кафедра неврологии, Университетская больница «Мурацан»

Ключевые слова: *запах, вкус, нервная система, патологические состояния, нейродегенеративные нарушения, прием лекарств, коронавирус.*

Целью обзорной статьи явилось обобщение данных литературы, касающихся изучения обонятельно-вкусовых дисфункций, методологии их исследования, а также патофизиологии патологических состояний, развивающихся при ряде заболеваний. Внимание уделено терминологии обонятельных и вкусовых нарушений, механизмам их развития. Проанализированы данные относительно обонятельных нарушений при нейродегенеративных заболеваниях, обонятельных нарушений из-за психических расстройств, расстройств вкуса из-за приема лекарств, а также у пациентов с коронавирусом с дисфункцией обоняния и вкуса. Предсставлены их особенности и закономерности, показаны общие черты, одновременно раскрывая существующие проблемы.

SUMMARY

OLFACTORY AND GUSTATORY DYSFUNCTIONS IN SOME PATHOLOGICAL CONDITIONS

Galstyan L.S.
YSMU, Department of Neurology, "Muratsan" University Hospital

Keywords: *smell, taste, nervous system, pathological conditions, neurodegenerative disorders, medication, coronavirus.*

The purpose of the review article was to summarize the literature data concerning the study of olfactory-gustatory dysfunctions, the methodology of their study, as well as the pathophysiology of pathological conditions developing in a number of diseases. Serous attention was paid to the terminology of olfactory and gustatory disturbances, and the mechanisms of their development.

The data on olfactory disorders in neurodegenerative diseases, olfactory disturbances due to mental disorders, taste disorders due to medication as well as in patients with coronavirus with smell and taste dysfunction were analyzed. Their features and patterns were presented, common similarities were shown, while simultaneously revealing existing problems.

ՀՏԴ՝ 616.36:578:616.9

ԼՅԱՐԴԻ ՈՉ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ՃԱՐՊԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ COVID-19 ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ

Մինասյան Ա.Մ.[1], Սիմոնյան Ա.Ռ.[1], Ղազինյան Ի.Ա.[2]
[1] ԵՊԲՀ, ներքին հիվանդությունների (պուլմոնոլոգիա և նեֆրոլոգիա) ամբիոն
[2] ԵՊԲՀ, ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոն

Ստացված է՝ 12.10.2021, գրախոսված է՝ 25.10.2021, ընդունված է՝ 27.10.2021

Բանալի բառեր՝ *COVID-19, NAFLD, մետաբոլիկ համախտանիշ, ճարպային լյարդ, տրանսամինազներ:*

Լյարդի ոչ ալկոհոլային ճարպային հիվանդությունը (ԼՈԱՃՀ, NAFLD-Nonalcoholic fatty liver disease) լյարդի ախտահարումների ամենատարածված պատճառն է ամբողջ աշխարհում, հատկապես՝ լյարդի կենսաքիմիական ցուցանիշների բարձր մակարդակի դեպքում: Դիմողների մեծամասնությունը անախտանիշ է կամ նշում է ոչ սպեցիֆիկ ախտանիշներ, ինչպիսիք են հոգնածությունը, ցավը աջ ենթակողի շրջանում: Բնորոշ ֆիզիկալ հետազոտության տվյալներ չկան, բայց ճարպակալումը և հեպատոմեգալիան հաճախ են դիտվում: Հետևաբար ԼՈԱՃՀ-ի ախտորոշումը դրվում է պատահականորեն ուլտրաձայնային հետազոտության ժամանակ՝ պայմանավորված հիվանդի այլ ախտանիշով կամ վիճակով [25]:

Վերջին տվյալների համաձայն՝ ԱՄՆ-ում մեծահասակների 68%-ի դեպքում արձանագրվել է ճարպակալում կամ քաշի ավելացում, որը վկայում է 75-100 մլն ԱՄՆ բնակչության շրջանում ԼՈԱՃՀ-ի հավանական առկայությունը: Ուսումնասիրություններում մեծամասամբ ԼՈԱՃՀ-ի տարածվածությունը գնահատվում է 25-45%, որը շատանում է ճարպակալմանը և շաքարային դիաբետին զուգահեռ [8, 25, 42]:

ԼՈԱՃՀ-ն առաջին անգամ նկարագրվել է 1980 թվականին և բաժանվում է 2 հյուսվածաբանական տեսակների՝ 1. ոչ ալկոհոլային ճարպային լյարդ, որը ներառում է լյարդի իզոլացված ստեատոզով և աննշան ոչ սպեցիֆիկ բորբոքումով ստեատոզով հիվանդներ, 2. ոչ ալկոհոլային ստեատոհեպատիտ, որը տարբերվում է առաջինից լրացուցիչ հեպատոցելյուլյար վնասման առկայությամբ՝ ֆիբրոզով կամ առանց ֆիբրոզի [21, 23]: Ոչ ալկոհոլային ստեատոհեպատիտը (ՈԱՍՀ, NASH-Nonalcoholic steatohepatitis) ԼՈԱՃՀ-ի հարաճող տարբերակն է [21, 31, 39]:

Լյարդի ֆիբրոզի առկայությունը ելքի կարևոր չափանիշ է, որը գնահատվում է METAVIR սանդղակով ֆիբրոզի բացակայությունից (0 փուլ) մինչև ցիռոզ (4-րդ փուլ): Հիվանդներից շատերի դեպքում ֆիբրոզի հարաճումը պայմանավորված է անամնեզում ՈԱՍՀ-ի առկայությամբ, իսկ ցիռոզի բուժվելու հավանականությունը մոտավորապես 20% է: Ի տարբերություն նախորդի՝ ԼՈԱՃՀ-ն, ըստ ցիռոզի հարաճման գնահատման ռիսկի, 4%-ից պակաս դեպքերում ունի շատ ավելի բարորակ ընթացք [26, 31, 39]: Այսպիսով, ԼՈԱՃՀ-ով հիվանդների շրջանում ՈԱՍՀ-ի հարաճումը ցիռոզի առավել հավանական է, քան միայն լյարդային ստեատոզով հիվանդների դեպքում [26]:

Մի շարք մասնագետներ նշում են ալանինամինոտրանսֆերազայի (ԱԼԱՏ) կայուն բարձր մակարդակի զուգորդումը ՈԱՍՀ-ի հարաճման մեծ ռիսկի հետ, սակայն հիվանդության հարաճող ընթացքով հիվանդների դեպքում հաճախ լինում է լյարդի ֆերմենտների նորմալ մակարդակ, որը դժվարացնում է ռիսկային հիվանդների տարբերակումը [1, 27]: ԱԼԱՏ-ի բարձրացած մակարդակի զգայունությունը և սպեցիֆիկությունը ՈԱՍՀ-ի դեպքում համապատասխանաբար 45% և 85% են: ՈԱՍՀ-ն մնում է թերի ախտորոշված՝ մասամբ հաշվի առնելով նրա կախվածությունը ԱԼԱՏ-ի, ԱՍԱՏ-ի (ասպարտատամինոտրանսֆերազա) բարձրացած մակարդակից, որը համապատասխան կլինիկական վիճակներում ունի չափավոր սպեցիֆիկություն, սակայն նրանց զգայունությունը հնարավորություն չի տալիս որոշելու կամ տարբերակելու այն հիվանդներին, որոնց դեպքում առկա է ՈԱՍՀ [28, 32]:

Մետաբոլիկ համախտանիշով (ՄՀ) հիվանդները, որոնց դեպքում առկա են հեպատիկ ստեատոզի ուլտրաձայնային չափանիշներ (անկախ ԱԼԱՏ-ԱՍԱՏ-ի բարձր ցուցանիշներ) ՈԱՍՀ-ի ռիսկի խմբում են [8]: ՈԱՍՀ-ն համալիր հիվանդություն է և բնորոշվում է բազմաթիվ մեխանիզմներով՝ մետաբոլիկ, գենետիկ, շրջակա միջավայրի և աղիքային միկրոֆլորայի

*** ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ**

Ա.Մ. Մինասյան
ԵՊԲՀ, ներքին հիվանդությունների (պուլմոնոլոգիա և նեֆրոլոգիա) ամբիոն
Հասցե՝ *ՀՀ, Երևան, 0025,Կորյունի 2*
Էլ. փոստ՝ *armine_minasyan@yahoo.com*
Հեռ.՝ *(+374) 93 86 45 19*

գործոններով [38]:

Մետաբոլիկ համախտանիշի դրսևորումների առկայությունը, ինչպիսիք են կենտրոնական ճարպակալումը, զարկերակային հիպերտենզիան (ԶՀ), դիսլիպիդեմիան, շաքարային դիաբետի 2-րդ տեսակը (ՇԴ տեսակ 2) զուգորդվում են ՈԱՃՀ-ի և նրա հարաճման մեծ ռիսկի հետ [25]: Հիմնվելով NCEP (National Centers For Environmental Prediction) էքսպերտների հետազոտությունների արդյունքների վրա՝ մետաբոլիկ համախտանիշի ախտորոշման և բուժման համար կիրառվում են հետևյալ չափանիշները (պետք է առկա լինի 3 և ավելի ախտանիշ) [29]՝

- գոտկատեղի շրջագիծը 102 սմ-ից ավել տղամարդկանց և 88-ից ավել կանանց դեպքում,
- տրիգլիցերիդների 150 մգ-ից ավել մակարդակ,
- ԲԽԼՊ-ի (բարձր խտության լիպոպրոտեիդներ) 40 մգ/դլ-ից ցածր մակարդակ կանանց և 50 մգ/դլ-ից ցածր տղամարդկանց դեպքում,
- ԶՃ (զարկերակային ճնշում) բարձրացում՝ 130 մմ ս.ս.-ից բարձր սիստոլիկ և 85 մմ ս.ս.-ից բարձր դիաստոլիկ:

Քաղցած ժամանակ արյան գլյուկոզի 110 մգ/դլ-ից ավել մակարդակը [29] դիաբետի և սիրտ-անոթային ռիսկի այլ գործոնների զարգացման տեսանկյունից լյարդային ճարպի քանակի ախտորոշումը կանխորոշիչ է [3, 9]: Ուլտրաձայնային հետազոտությունը մատչելի ախտորոշիչ մեթոդ է, որն ունի 93% զգայունություն, երբ ստեատոզը 33%-ից ավելի է, սակայն զգայունությունը քիչ է, երբ ստեատոզը 30%-ից պակաս է [11, 36]: Ուլտրաձայնային նոր մեթոդները հնարավորություն են տալիս ավելի հստակ որոշելու ճարպի քանակը և հաղթահարում են այդ սահմանափակումը [22]: Ուլտրաձայնային հետազոտությամբ ախտորոշվում է ճարպային հեպատոզին բնորոշ նշանների առկայությունը, ինչպիսիք են բարձրացած էխոգենությունը և անոթային նկարի աղքատացումը պերիֆերիայում, որոնք կարող են դիտվել նաև ֆիբրոզի դեպքում, հետևաբար անհրաժեշտ է ներկայացնել ֆիբրոզը և նույնիսկ վաղ ցիռոզը՝ ի լրումն ստեատոզի:

Համակարգչային շերտագրությամբ էականորեն չի մեծացնում տեսանելիության զգայունությունը, եթե ստեատոզը քիչ արտահայտված է և ունի թերություններ, ինչպիսիք են դժվարամատչելիությունը և ճառագայթման ազդեցությունը: Մագնիսառեզոնանսային հետազոտությամբ՝ ներառյալ մագնիսառեզոնանսային սպեկտրոսկոպիան, հնարավոր է հայտնաբերել 5,56%-ից ավելի լյարդային ճարպ (շեմ) մինչև մոտավորապես 100% ճշգրտությամբ [33]: Երկուսն էլ սահմանափակ են կիրառվում՝ թանկարժեք լինելու պատճառով, իսկ ՄՌ սպեկտրոսկոպիան՝ լիմիտացված հասանելիություն, քանի որ հիմնականում կատարվում է ակադեմիական բժշկական կենտրոններում: Ճառագայթային հետազոտությամբ հնարավոր չէ տարբերակել ՈԱՃՀ-ն հզոլացված հեպատիկ ստեատոզից: Սակայն նորագույն MRI (Magnetic Resonance Imaging) սարքերով ապագայում այդ տարբերակումը հնարավոր է [4]:

FLI-ին (Fatty Liver Index) որոշելը կանխորոշիչ գնահատման հնարավորություն ունի, և հաշվարկվում է հասանելի ցուցանիշներով՝ մարմնի զանգվածի ինդեքսով (ՄԶԻ), որովայնի շրջագծով, տրիգլիցերիդների մակարդակով և ԳԳՏ-ով (գամմա-գլյուտամիլտրանսֆերազա) [25]: ԼՈԱՃՀ-ի ժամանակ ֆիբրոզի գնահատման բանաձևն է՝ -1,675+0,037× տարիք (տարիներ) + 0,094 × ՄԶԻ (կգ/մ) +1,13 × քաղցած ժամանակ գլյուկոզի բարձր մակարդակ կամ ՇԴ (այո=1, ոչ=0) + 0,99 × ԱՍԱՏ/ԱԼԱՏ - 0,013 × թրոմբոցիտների քանակ (× 10^9/լ) - 0,66 × ալբումինի մակարդակ (գ/դլ)

ԼՈԱՃՀ ֆիբրոզի աստիճանի գնահատման սանդղակ՝

1. Ֆիբրոզի բացակայություն - ֆիբրոզի 2-րդ շրջան՝ միավոր -1,455-ից պակաս
2. Կասկածելի ֆիբրոզ՝ միավոր -1,455 – 0,675
3. Ֆիբրոզի 3-րդ և 4-րդ շրջան՝ միավոր 0,675-ից ավելի [2,13]:

Հեպատիկ ստեատոզը բավականին հաճախադեպ է SARS-CoV 2 (Severe Acute Respiratory Syndrome) դրական հիվանդների դեպքում: Չնայած հիմնականում COVID-19-ը առաջնային ռեսպիրատոր հիվանդություն է, սակայն տրանսամինազեմիան այդ դեպքում զուգորդվում է ավելի շատ մահացության հետ [5]: COVID-19-ի հիմնական կլինիկական ախտանիշներն են ջերմությունը և չոր հազը: Մի շարք հիվանդների դեպքում արձանագրվել են ստամոքս-աղիքային ախտանիշներ (սրտխառնոց, փսխում, լուծ), որոնց հետ դիտվել է նաև լյարդի վնասում [10, 15, 41]:

Լյարդի վնասման և լյարդի քրոնիկական հիվանդության հաճախականությունը COVID-19-ով և գաստրոինտեստինալ ախտանիշներով հիվանդների դեպքում նշանակալիորեն ավելին է, քան նրանց դեպքում, ովքեր չունեն ստամոքս-աղիքային ախտանիշներ համապատասխանաբար 17,57% և 8,84%, 10,81% և 2,95% [20]: Դա նշանակում է, որ լյարդի քրոնիկական հիվանդությունն անմիջականորեն փոխկապակցված է գաստրոինտեստինալ ախտանիշների հետ, և լյարդի վնասման հաճախականությունը, որը բնորոշվում է ԱԼԱՏ-ի, ԱՍԱՏ-ի մակարդակի բարձրացումով, COVID-19 հիվանդների շրջանում արձանագրվում է 14,8-53% դեպքերում [43]:

Լյարդի վնասման ծանրությունն ավելի արտահայտված է հիվանդության երկրորդ շաբաթվա ընթացքում և կարող է պայմանավորված լինել լեղուղիներում տեղակայված վիրուսային վարակի ենթարկված լյարդային բջիջների ռեգեներացիայով, որտեղ ԱՓՖ-2-ի (անգիոտենզին փոխակերպող ֆերմենտ-2) էքսպրեսիան մեծ է [45]:

Լյարդի վնասումը կարող է նաև պայմանավորված լինել համակարգային բորբոքային պատասխանով և իմունային վնասմամբ [44]: L.L. Յուն և համահեղինակները [18] նշում են, որ լյարդի վնասումը հիվանդության սկզբնական փուլում արտահայտված չէ, որն ավելի ուշ շրջանում հանկարծակի ենթարկվում է հարաճման՝ ամենայն հավանականությամբ պայմանավորված համակարգային բորբոքային պատասխանի համախտանիշով (SIRS-Systemic Inflammatory Response Syndrome), նաև ակտիվացած իմունային համակարգով՝ որպես վիրուսային վարակի հետևանք [18]: SIRS-ը և իմունային վնասումը կարող են առաջացնել բազմաօրգանային վնասում՝ ներառյալ լյարդը [45]:

Նոր կորոնավիրուսը կարող է անմիջականորեն վնասել լյարդի գործառույթը: Քանի որ վիրուսի ՌՆԹ-ն կարող է հայտնաբերվել COVID-19 հիվանդների արյան մեջ, իսկ լյարդը արյան գերմատակարարումով օրգան է, որն անմիջական վնասվում է վիրուսից [46]: ԱՓՖ-2-ը ռեցեպտոր է SARS-COV-2-ի ներմուծման համար և առկա է լյարդի և լեղուղիների էպիթելային բջիջների վրա. դա նշանակում է, որ լեղուղիների բջիջների վնասումը և դիսֆունկցիան հանգեցնում են հեպատոցիտների դիսֆունկցիային և լյարդի հետագա վնասմանը [7, 14, 17]: Ի վերջո լյարդի ախտահարման առավել հավանական պատճառը լեղուղիների, քան հեպատոցիտների վնասումն է և դիսֆունկցիան: Չնայած այնպիսի մարկերների արտահայտված բարձրացման բացակայությանը, ինչպիսիք են ԳԳՏ-ն, ՅՖ-ն (հիմնային ֆոսֆատազա), որը զուգորդվում է լեղուղիների վնասման հետ, COVID-19-ով հիվանդների դեպքում հեպատոցիտների և լեղուղիների բջիջների անմիջական վնասումը վիրուսի ազդեցությամբ սահմանափակ է [24]:

Լյարդի վնասումը COVID-19-ով հիվանդների շրջանում կարող է առաջանալ դեղեր ընդունելուց [47]: Ջերմությունը COVID-19-ի հիմնական ախտանիշներից է, և ացետամինոֆենը լյարդի վնասում առաջացնող հիմնական դեղն է, որը կարող է լյարդային դիսֆունկցիայի պատճառ դառնալ [18]: Ավելին՝ հակավիրուսային դեղերը, հակաբիոտիկները, ստերոիդները, բուսական դեղամիջոցները, ինչպես նաև հորմոնները բավականին լայնորեն կիրառվում են COVID-19-ի բուժման համար [6, 30]: Յակավիրուսային դեղամիջոցները, ինչպիսիք են օսելտամիվիրը, աբիդոլը, լոպինավիրը և ռիտոնավիրը, հանգեցնում են լյարդի վնասման, իսկ լոպինավիրի և ռիտոնավիրի կիրառումը լյարդի վնասման հավանականությունը մեծացնում է 4 անգամ [6, 12, 18]:

Այս ամենով բացատրվում է լյարդի վնասումը, որն ավելի հաճախ նկատվում է հիվանդության ծանր ընթացքի ժամանակ, երբ խանգարվում է պրեպարատների մետաբոլիզմը, էքսկրեցիան, էֆեկտիվ կոնցենտրացիան, որը հանգեցնում է ինտոքսիկացիայի ռիսկի մեծացման հակավիրուսային բուժման հետևանքով [34]: Այսպիսով, մենք կարող ենք նշել լյարդի գործառույթի մոնիտորինգի կարևորությունը COVID-19-ով հիվանդների շրջանում: Ավելին՝ լյարդի քրոնիկական հիվանդության առկայությունը մեծացնում է SARS-Cov2-ով ինֆեկցվածության հավանականությունը՝ հաշվի առնելով իմունիտետի ցածր մակարդակը:

Լյարդի բիոպսիայի մասին սկզբնական տեղեկությունները COVID-19-ով հիվանդների դեպքում ցույց էին տալիս հեպատոցիտների հյուսվածքաբանական փոփոխությունները միտոտիկ բջիջների և էոզինոֆիլային մարմնիկների հետ, որով հաստատվում է, որ SARS-CoV 2-ը հանգեցնում է լյարդի բջիջների ապոպտոզի [5]: Այլ մասնագետներ նշում են, որ բորբոքային մեդիատորների շատացումը, ինչպիսիք են ԻԼ-1-ը, 6-ը, 10-ը, կարող են COVID-19-ով հիվանդների դեպքում հետագայում հանգեցնել հեպատոցիտների վնասման [5]:

ԼՈԱՃՅ-ը, որը նույնպես հայտնի է որպես լյարդի՝ մետաբոլիկ համախտանիշով զուգորդված ճարպային հիվանդություն՝ MAFLD (Metabolic Associated Fatty Liver Disease), մետաբոլիկ համախտանիշի լյարդային մանիֆեստացիան է, որը ներառում է ճարպակալումը, ՇԴ-ն, դիսլիպիդեմիան, ինսուլինառեզիստենտականությունը [16]: Յասկանալի է դառնում, որ այս տեսանկյունից ԼՈԱՃՅ-ը կարող է հանգեցնել COVID-19-ի ծանր ընթացքին: Բազմակենտրոն ռետրոսպեկտիվ հետազոտությունը ըստ Ժենգի և համահեղինակների հետագայում հաստատեց այս դրույթը և ցույց տվեց, որ ճարպակալումը ԼՈԱՃՅ-ով հիվանդների դեպքում վեց անգամ ավելացնում է COVID-19-ի ծանր ընթացքը [49]:

Սաչդևան և համահեղինակները [37] նշում են ԼՈԱՃՅ-ի զուգորդումը COVID-19-ի ծանր ընթացքի մեծ ռիսկի հետ և համոզված են, որ ճարպային լյարդը և դրանով պայմանավորված բորբոքումը կարող են հանգեցնել վիրուսի հետ զուգորդված ցիտոկինային

հողմի առաջացմանը, որը կհանգեցնի COVID-19-ի ընթացքի վատացմանը: Ավելին՝ լյարդային ճարպը կարող է պայմանավորված լինել COVID-19-ի դրական թեստավորման մեծ ռիսկով [35]: Տեղերը և համահեղինակները հայտնաբերել են լյարդի ֆիբրոզի բարձր մակարդակի (4 score) և Covid-19-ով հիվանդների հիվանդության ծանրության աստիճանի փոխկապակցվածությունը [40]: Հետազոտության մյուս արդյունքները ցույց են տալիս, որ ԼՈԱՃՀ-ն կարող է զուգորդվել ԱԼԱՏ-ի մակարդակի արտահայտված բարձրացման հետ՝ համեմատելով ՄԶԻ-ի և այլ գործոնների հետ [19]:

Այսպիսով, լյարդում ճարպի կուտակումը ԼՈԱՃՀ-ով հիվանդների դեպքում, հանգեցնելով նրա վնասման և հետագա ֆիբրոզ փոփոխությունների, կարող է ոչ բարենպաստ կանխատեսման հավանական պատճառներից մեկը լինել COVID-19-ով հիվանդների շրջանում և զուգորդվում է ծանր ախտանիշներով և հարաճող ընթացքի մեծ ռիսկով [37]:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ լյարդային մանիֆեստացիան COVID-19-ի դեպքում պայմանավորված է կորոնավիրուսային հիվանդության ծանրությամբ, չնայած հստակ փոխկապակցվածությունը ճարպային լյարդի և COVID-19-ի միջև քննարկման տեղիք է տալիս: COVID-19 վիրուսային վարակի ազդեցությունը ճարպային լյարդի առկայության դեպքում դեռ պարզաբանված չէ, որը հաշվի առնելով՝ մեր նպատակն է ուսումնասիրել մասնագիտական գրականության տվյալները՝ պարզաբանելու COVID-19-ի ծանրության աստիճանի ազդեցությունը լյարդի գործառույթ վրա ԼՈԱՃՀ-ով հիվանդների շրջանում, հետազոտելու, գնահատելու լյարդի գործառութային փոփոխությունները այդ հիվանդների դեպքում, նաև հնարավորինս մշակելու կանխարգելիչ բուժման մոտեցումներ՝ ոչ բարենպաստ ելքերից խուսափելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Amarapurkar D.N., Patel N.D. Clinical spectrum and natural history of non-alcoholic steatohepatitis with normal alanine aminotransferase values. Trop. Gastroenterol., 2004;25(3):130-134
2. Angulo P., Hui J.M., Marchesini G. et al. The NAFLD fibrosis score: a noninvasive system that identifies liver fibrosis in patients with NAFLD. Hepatology, 2007;45(4):846-854
3. Arulanandan A., Ang B., Bettencourt R. et al. Association between quantity of liver fat and cardiovascular risk in patients with nonalcoholic fatty liver disease independent of nonalcoholic steatohepatitis [published online February 3, 2015]. Clin.Gastroenterol.Hepatol.,doi:10.1016/j.cgh.2015 .01.027
4. Bastati N., Feier D., Wibmer A. et al. Noninvasive differentiation of simple steatosis and steatohepatitis by using gadoxetic acid-enhanced MR imaging in patients with nonalcoholic fatty liver disease: a proof-of-concept study. Radiology, 2014;271(3):739-747
5. Boregowda U., Aloysius M.M., Perisetti A., Gajendran M., Bansal P., Goyal H. Serum activity of liver enzymes is associated with higher mortality in COVID-19: a systematic review and meta-analysis. Front Med (Lausanne) 2020;7:431. doi: 10.3389/fmed.2020.00431.
6. Cai Q., Huang D., Yu H., Zhu Z., Xia Z., Su Y., Li Z., Zhou G., Gou J., Qu J., Sun Y., Liu Y., He Q., Chen J., Liu L., Xu L. COVID-19: Abnormal liver function tests. J. Hepatol., 2020;73:566–574
7. Chai X.Q., Hu L.F., Zhang Y., Han W.Y., Lu Z., Ke A.W., Zhou J., Shi G.M., Fang N., Fan J., Cai J.B., Fan J., Lan F. Specific ACE2 expression in cholangiocytes may cause liver damage after 2019-nCoV infection.BioRxiv.,2020
8. Chalasani N., Younossi Z., Lavine J.E. et al. American Gastroenterological Association; American Association for the Study of Liver Diseases; American College of Gastroenterology. The diagnosis and management of non-alcoholic fatty liver disease: practice guideline by the American Gastroenterological Association, American Association for the Study of Liver Diseases, and American College of Gastroenterology. Gastroenterology, 2012;142(7): 1592-1609
9. Chang Y., Jung H.S., Yun K.E., Cho J., Cho Y.K., Ryu S. Cohort study of non-alcoholic fatty liver disease, NAFLD fibrosis score, and the risk of incident diabetes in a Korean population. Am. J. Gastroenterol., 2013;108(12):1861-1868
10. Chen N., Zhou M., Dong X., Qu J., Gong F., Han Y., Qiu Y., Wang J., Liu Y., Wei Y., Xia J., Yu T., Zhang X., Zhang L. Epidemiological and clinical characteristics of 99 cases of 2019 novel coronavirus pneumonia in Wuhan, China: a descriptive study. Lancet, 2020;395:507–513
11. Dasarathy S., Dasarathy J., Khiyami A., Joseph R., Lopez R., McCullough A.J. Validity of real time ultrasound in the diagnosis of hepatic steatosis: a prospective study.J. Hepatol., 2009;51(6):1061-1067
12. Fan Z., Chen L., Li J., Cheng X., Yang J., Tian C., Zhang Y., Huang S., Liu Z., Cheng J. Clinical Features of COVID-19-Related Liver Functional Abnormality.Clin. Gastroenterol.Hepatol.,2020;18:1561–1566
13. GIHep (Gastroenterology and Hepatology Resources). NAFLD fibrosis score. http://gihep.com/calculators/hepatology/nafldfibrosis-score/. Accessibility verified May 5, 2015
14. Guan G.W., Gao L., Wang J.W., Wen X.J., Mao T.H., Peng S.W., Zhang T., Chen X.M., Lu F.M. [Exploring the mechanism of liver enzyme abnormalities in patients with novel coronavirus-infected pneumonia]Zhonghua Gan Zang Bing Za Zhi, 2020;28:100–106
15. Guan W.J., Ni Z.Y., Hu Y., Liang W.H., Ou C.Q., He J.X., Liu L., Shan H., Lei C.L., Hui D.S.C., Du B., Li L.J., Zeng G., Yuen K.Y., Chen R.C., Tang C.L., Wang T., Chen P.Y., Xiang J., Li S.Y., Wang J.L., Liang Z.J., Peng Y.X., Wei L., Liu Y., Hu Y.H., Peng P., Wang J.M., Liu J.Y., Chen Z., Li G., Zheng Z.J., Qiu S.Q., Luo J., Ye C.J., Zhu S.Y., Zhong N.S. China Medical Treatment Expert Group for COVID-19. Clinical Characteristics of Coronavirus Disease 2019 in China.N. Engl. J. Med., 2020;382:1708–1720
16. Hashimoto E., Taniai M., Tokushige K. Characteristics and diagnosis of NAFLD/NASH. J. Gastroenterol.Hepatol., 2013;28(Suppl 4):64–70. doi: 10.1111/jgh.12271
17. Hoffmann M., Kleine-Weber H., Kr ger N., M ller M., Drosten C., P hlmann S. The novel coronavirus 2019 (2019-nCoV) uses the SARS-1 coronavirus receptor2 ACE2 and the cellular protease TMPRSS2 for entry into target cells, BioRxiv,2020
18. Hu L.L., Wang W.J., Zhu Q.J., Yang L. [Novel coronavirus pneumonia-related liver injury: etiological analysis and treatment strategy]Zhonghua Gan Zang Bing Za Zhi, 2020;28:97–99
19. Huang R., Zhu L., Wang J., Xue L., Liu L., Yan X. et al. Clinical features of COVID-19 patients with non-alcoholic fatty liver disease. Hepatol.Commun., 2020. 10.1002/hep4.1592
20. Jin X., Lian J.S., Hu J.H., Gao J., Zheng L., Zhang Y.M., Hao S.R., Jia H.Y., Cai H., Zhang X.L., Yu G.D., Xu K.J., Wang X.Y., Gu J.Q., Zhang S.Y., Ye C.Y., Jin C.L.,

Lu Y.F., Yu X., Yu X.P., Huang J.R., Xu K.L., Ni Q., Yu C.B., Zhu B., Li Y.T., Liu J., Zhao H., Zhang X., Yu L., Guo Y.Z., Su J.W., Tao J.J., Lang G.J., Wu X.X., Wu W.R., Qv T.T., Xiang D.R., Yi P., Shi D., Chen Y., Ren Y., Qiu Y.Q., Li L.J., Sheng J., Yang Y. Epidemiological, clinical and virological characteristics of 74 cases of coronavirus-infected disease 2019 (COVID-19) with gastrointestinal symptoms.Gut, 2020;69:1002–1009

21. Kleiner D.E., Brunt E.M., Van Natta M. et al. Nonalcoholic Steatohepatitis Clinical Research Network. Design and validation of a histological scoring system for nonalcoholic fatty liver disease. Hepatology, 2005;41(6):1313-1321
22. Lin S.C., Heba E., Wolfson T. et al. Noninvasive diagnosis of nonalcoholic fatty liver disease and quantification of liver fat using a new quantitative ultrasound technique [published online December 3, 2014]. Clin.Gastroenterol.Hepatol., doi:10.1016/j .cgh.2014.11.027
23. Ludwig J., Viggiano T.R., McGill D.B., Oh B.J. Nonalcoholic steatohepatitis: Mayo Clinic experiences with a hitherto unnamed disease. Mayo Clin. Proc., 1980;55(7):434-438
24. Ma K., Chen T., Han M.F., Guo W., Ning Q. [Management and clinical thinking of Coronavirus Disease 2019]Zhonghua Gan Zang Bing Za Zhi, 2020;28:E002
25. Mary E. Rinella, MD, Nonalcoholic Fatty Liver Disease A Systematic Review, JAMA. 2015;313(22):2263-2273. doi:10.1001/jama.2015.5370
26. Matteoni C.A., Younossi Z.M., Gramlich T., Boparai N., Liu Y.C., McCullough A.J. Nonalcoholic fatty liver disease: a spectrum of clinical and pathological severity. Gastroenterology, 1999;116(6):1413-1419
27. Mofrad P., Contos M.J., Haque M. et al. Clinical and histologic spectrum of nonalcoholic fatty liver disease
28. Nascimbeni F., Pais R., Bellentani S. et al. From NAFLD in clinical practice to answers from guidelines.J. Hepatol., 2013;59(4):859-871
29. National Cholesterol Education Program (NCEP) Expert Panel on Detection, Evaluation, and Treatment of High Blood Cholesterol in Adults (Adult Treatment Panel III). Third report of the National Cholesterol Education Program (NCEP) expert panel on detection, evaluation, and treatment of high blood cholesterol in adults (Adult Treatment Panel III) final report.Circulation. 2002; 106(25):3143-3421
30. National Health Commission of the People's Republic of China. Diagnosis and Treatment of Coronavirus disease 2019 (Trial Version 7). Accessed March 6, 2020
31. Pais R., Charlotte F., Fedchuk L. et al.; LIDO Study Group. A systematic review of follow-up biopsies reveals disease progression in patients with non-alcoholic fatty liver.J.Hepatol., 2013;59(3):550- 556
32. Ratziu V., Cadranel J.F., Serfaty L. et al. A survey of patterns of practice and perception of NAFLD in a large sample of practicing gastroenterologists in France.J. Hepatol., 2012;57(2):376-383
33. Reeder SB, Cruite I, Hamilton G, Sirlin CB. Quantitative assessment of liver fat with magnetic resonance imaging and spectroscopy.JMagnReson Imaging. 2011;34(4):1.
34. Rismanbaf A., Zarei S. Liver and Kidney Injuries in COVID-19 and Their Effects on Drug Therapy; a Letter to Editor.Arch. Acad. Emerg. Med., 2020;8:e17
35. Roca-Fern ndez A., Dennis A, Nicolls R, McGonigle J., Kelly M., Banerjee R. High liver fat associates with higher risk of developing symptomatic COVID-19 infection - initial UK biobank observations. 2020. 10.1101/2020.06.04.20122457
36. Saadeh S., Younossi Z.M., Remer E.M. et al. The utility of radiological imaging in nonalcoholic fatty liver disease. Gastroenterology, 2002;123(3):745-750
37. Sachdeva S, Khandait H, Kopel J, Aloysius MM, Desai R, Goyal H. NAFLD and COVID-19: a Pooled Analysis [published online ahead of print, 2020 Nov 6]. SN Compr Clin Med. 2020;1-4. doi:10.1007/s42399-020-00631-3
38. Singal A.G., Manjunath H., Yopp A.C. et al. The effect of PNPLA3 on fibrosis progression and development of hepatocellular carcinoma: a meta-analysis. Am. J. Gastroenterol., 2014;109(3): 325-334
39. Singh S., Allen A.M., Wang Z., Prokop L.J., Murad M.H., Loomba R. Fibrosis progression in nonalcoholic fatty liver vs nonalcoholic steatohepatitis: a systematic review and meta-analysis of paired-biopsy studies. Clin. Gastroenterol.Hepatol., 2015;13(4):643-654, e9
40. Targher G., Mantovani A., Byrne C.D., Wang X.B., Yan H.D., Sun Q.F., Pan K.H., Zheng K.I., Chen Y.P., Eslam M., George J., Zheng M.H. Risk of severe illness from COVID-19 in patients with metabolic dysfunction-associated fatty liver disease and increased fibrosis scores. Gut, 2020;69(8):1545–1547. doi: 10.1136/gutjnl-2020-321611
41. Wang D., Hu B., Hu C., Zhu F., Liu X., Zhang J., Wang B., Xiang H., Cheng Z., Xiong Y., Zhao Y., Li Y., Wang X., Peng Z. Clinical Characteristics of 138 Hospitalized Patients With 2019 Novel Coronavirus-Infected Pneumonia in Wuhan, China. JAMA.2020
42. Williams C.D., Stengel J., Asike M.I. et al. Prevalence of nonalcoholic fatty liver disease and nonalcoholic steatohepatitis among a largely middle-aged population utilizing ultrasound and liver biopsy: a prospective study. Gastroenterology, 2011;140(1): 124-131
43. Xu L., Liu J., Lu M., Yang D., Zheng X. Liver injury during highly pathogenic human coronavirus infections.Liver Int., 2020;40:998–1004
44. Xu Z., Shi L., Wang Y., Zhang J., Huang L., Zhang C., Liu S., Zhao P., Liu H., Zhu L., Tai Y., Bai C., Gao T., Song J., Xia P., Dong J., Zhao J., Wang F.S. Pathological findings of COVID-19 associated with acute respiratory distress syndrome. Lancet Respir Med.2020;8:420–422
45. Yao N, Wang SN, Lian JQ, Sun YT, Zhang GF, Kang WZ, Kang W. [Clinical characteristics and influencing factors of patients with novel coronavirus pneumonia combined with liver injury in Shaanxi region] Zhonghua Gan Zang Bing Za Zhi. 2020;28:234–239.
46. Yeo C., Kaushal S., Yeo D. Enteric involvement of coronaviruses: is faecal-oral transmission of SARS-CoV-2 possible?Lancet Gastroenterol. Hepatol.,2020;5:335–337
47. Zhang C., Shi L., Wang F.S. Liver injury in COVID-19: management and challenges.Lancet Gastroenterol.Hepatol.,2020;5:428–430
48. Zhao Jian-Nan , Ying Fan, and Shuo-Dong Wu, Liver injury in COVID-19: A minireview,World J. Clin. Cases, 2020 Oct 6; 8(19): 4303–4310
49. Zheng K.I., Gao F., Wang X.B., Sun Q.F., Pan K.H., Wang T.Y., Ma H.L., Chen Y.P., Liu W.Y., George J., Zheng M.H. Letter to the Editor: Obesity as a risk factor for greater severity of COVID-19 in patients with metabolic associated fatty liver disease. Metabolism, 2020;108:154244. doi: 10.1016/j. metabol.2020.154244

РЕЗЮМЕ

НЕАЛКОГОЛЬНАЯ ЖИРОВАЯ БОЛЕЗНЬ ПЕЧЕНИ И COVID-19 ВИРУСНАЯ ИНФЕКЦИЯ

Минасян А.М.[1], Симонян А.Р.[1], Казинян И.С.[2]
[1] ЕГМУ, Кафедра внутренних болезней (пульмонология и нефрология)
[2] ЕГМУ, Кафедра пропедевтики внутренних болезней

Ключевые слова: *COVID-19 вирусная инфекция, неалкогольная жировая болезнь печени, метаболический синдром, жировая печень, трансаминазы.*

Повреждение печени отмечается у больных с коронавирусной инфекцией и его степень варьирует в зависимости от тяжести заболевания и возраста пациента. Системная воспалительная реакция, иммунное повреждение, ишемия-реперфузия, прямое вирусное и лекарственно-опосредованное воздействие на печень, а также хронические заболевания печени могут привести к его поражению. Хотя в большинстве случаев отмечается незначительная дисфункция печени, что обычно кратковременно и не нуждается в специальном лечении, важность мониторинга степени повреждения печени должна учитываться врачами. Тяжесть коронавирусного заболевания соотносится со степенью поражения печени в результате неалкогольной жировой болезни печени.

Нами проводился обзор современной литературы с целью определения взаимосвязи неалкогольной жировой болезни печени и тяжести COVID-19 вирусной инфекции независимо от ожирения, что является основным фактором риска для обоих случаев. Следовательно, печеночные проявления COVID-19 вирусной инфекции ассоциируются с ее тяжестью, хотя определение взаимосвязи между жировым повреждением печени и коронавирусной инфекцией требует разъяснения. В доступной нами литературе механизмы повреждения печени при COVID-19 вирусной инфекции не освещены достаточно, что требует дальнейших исследований в этой области. Патогенетические механизмы, клиническая характеристика, диагностические критерии, лечение и прогноз повреждения печени при COVID-19 вирусной инфекции должны быть определены в ходе последующих клинических исследований.

SUMMARY

NONALCOHOLIC FATTY LIVER DISEASE AND COVID-19 VIRAL INFECTION

Minasyan A.M.[1], Simonyan A.R.[1], Ghazinyan I.S.[2]
[1]YSMU, Department of Internal Diseases (Pulmonology and Nephrology)
[2]YSMU, Department of Propaedeutics of Internal Diseases

Keywords: *COVID-19, nonalcoholic fatty liver disease, metabolic dysfunction-associated fatty liver disease, fatty liver, transaminases.*

Liver injury was observed in patients with COVID-19, and its severity varied depending on disease severity and patient age. Systemic inflammatory response, immune damage, ischemia-reperfusion injury, viral direct damage, drugs, and underlying diseases may contribute to liver injury. Although, in most cases, mild liver dysfunction is observed, it is usually temporary and does not require special treatment. The importance of monitoring liver injury should be emphasized for doctors. The risk of severe disease could also be attributed to compromised liver function as a result of nonalcoholic fatty liver disease (NAFLD). We systematically reviewed current literature to ascertain the relationship between NAFLD and severe COVID-19 cases, independent of obesity, which is considered to be the major risk factor for both.

Hence, it can be concluded that the hepatic manifestation of COVID-19 is independently linked to the severity of coronavirus disease. The exact relationship between liver fat and COVID-19 needs further studies. The mechanism of liver injury in COVID-19 has not been elucidated up to date. Therefore, further studies need to be carried out. Diagnostic criteria, pathogenesis, clinical characteristics, treatment, and prognosis of liver injury in COVID-19 should be clarified in further clinical trials.

ՀՏԴ՝ 61(071.1):378

ՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԲԼՈՒՄԻ ՏԱՔՍՈՆՈՄԻԱՅԻ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴՐԱՀԵՆՔ (PROBLEM-BASED) ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նավասարդյան Գ.Ա., Պողոսյան Մ.Ա.
ԵՊԲՀ, տեսական առարկաների ուսումնամեթոդական խորհուրդ

Ստացված է՝ 11.05.2021, գրախոսված է՝ 12.05.2021, ընդունված է՝ 27.10.2021

Բանալի բառեր՝ *հիմնահարցահենք ուսուցում, նոր գաղափարներ, ուսանողակենտրոն:*

Տեսական ամբիոններում ԵՊԲՀ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման հայեցակարգերում շեշտավորվում են կրթության որակի և կրթական միջավայրի բարելավման հիմնախնդիրները: Նշված առումով դարձյալ առաջին պլան է մղվում ամբիոններում «գիտելիք-հմտություն-կարողականություն (ձեռնահասություն)» եռյակի շրջանակում ճշգրիտ մարտավարության իրագործումը՝ ուղղված ուսումնական գործընթացի կազմակերպման այնպիսի գործիքակազմի ներդրմանը, որը լիովին ներդաշնակում է նպատակներին՝ որակյալ կրթության ապահովում, վերջնարդյունքներից բխող հիերարխիկ մոդելների միջոցով դասավանդման պրոցեսի կատարելագործում, հմտությունների և կոմպետենցիաների շարունակական նորացվող փաթեթների ձևավորում, անցում ուսանողակենտրոն դասավանդման [3,4,5]:

Ասվածի շրջանակում կարևոր դեր են ձեռք բերում հետևյալ ուղենիշները՝

1. վերլուծական մտածողություն և նորարարություն,
2. ակտիվ ուսումնառություն և ուսումնառության ռազմավարություն,
3. ստեղծարարություն,
4. յուրօրինակություն և նախաձեռնողականություն,
5. տեխնոլոգիաների մշակում և ծրագրավորում,
6. քննադատական մտածություն և վերլուծություն,
7. բարդ խնդիրների լուծում,
8. առաջնորդություն և սոցիալական ազդեցություն,
9. հուզական ինտելեկտի և դատողության զարգացում,
10. նոր գաղափարների ձևավորում,
11. համակարգային վերլուծություն և գնահատում:

Ուսանողակենտրոն ուսուցումը ուղղորդում է սովորողին թիմային աշխատանքում զարգացնելու արդյունավետ հաղորդակցության հմտությունները, վերլուծական, ստեղծագործական մտածողությունը [1, 7]:

Ուսանողակենտրոն ուսուցման գործընթացում որոշակի դեր ունեն Բլումի տաքսոնոմիան և հիմնահարցահենք ուսուցումը:

21-րդ դարում կրթության պահանջվող որակն ապահովելու, ուսուցում-շուկա գործուն կապն իրագործելու խնդիր է առաջացել, որի լուծման արդյունավետ գործիք կարող է լինել հիմնահարցահենք (ՀՀՈւ (problem-based learning (PBL)) մեթոդը: Այն սովորելու գործընթացը որոշակի սցենարով ներկայացնելու հմտությունն է, որի շնորհիվ ամրապնդվում է ուսանողի գիտելիքը և նյութի հասկանալը: Հիմնահարցահենք ուսանողակենտրոն ուսուցման փաթեթն ընդգրկում է հետևյալ գործիքները.

1. Ուսանողն ինքն է որոշում, մշակում նպատակը և վերջնարդյունքները:
2. Ուսանողը մինչև խմբային քննարկումն ինքնուրույն սովորում է նյութը:
3. Ուսանումը կատարվում է փոքր խմբերում (8-10) դասախոսի հետ՝ ընգծելով ակտիվ հարցադրումները և դրանց քննարկումը:
4. Դասի ընթացքում կիրառական են հետևյալ նյութերը՝ հիվանդության պատմություն, լաբորատոր տվյալներ, ֆոտոնկարներ, հոդվածներ կամ տեսանյութեր, հիվանդի (իրական, սիմուլյացոն) ցուցադրում:
5. Խմբի բոլոր անդամները դերեր ունենն:
6. Թիմային աշխատանք՝ պրոբլեմի լուծման և ապագա պրակտիկայում այն կիրառելու

*** ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ**

Մ.Ա. Պողոսյան
ԵՊԲՀ, տեսական առարկաների ուսումնամեթոդական խորհուրդ
Հասցե՝ *ՀՀ, Երևան, 0025,Կորյունի 2*
Էլ. փոստ՝ *margaritapoghosyan11@gmail.com*
Հեռ.՝ *(+374) 55 81 11 73*

կարողությունների ձեռք բերում:
7. Ամեն մեկը կարող է կատարել նյութի շրջանակում առաջ քաշված դերը:
8. Թեմայի քննարկման հիմնահարցերն արտահայտվում են ուսումնական ծրագրերում:

Տեսական ամբիոններում ՀՀՈւ կիրառումը ներառում է՝

- ուղղագիծ, հորիզոնական, երկայնաձիգ ինտեգրացիայի կիրառումը,
- ուսանողներին ուղղորդում է ճիշտ իրագործելու «հասկանալ-իմանալ-կարողանալ» մեթոդական շղթան,
- համապատասխան ինֆորմացիան գտնելը՝ օգտագործելով դասագիրքը, հավելյալ նյութերը, հոդվածները, վեբ-կայքերը,
- տվյալ թեմայի շուրջ հարցախաղի միջոցով նյութի բովանդակությունը ներկայացնելը, դրա կապը կրթական հաջորդ աստիճաններում տրվող նյութերի հետ:

ՀՀՈւ օղակներն են՝
1. տվյալ նյութի (հիմնահարցի) շուրջ ուսանողի գիտելիքի կապակցում վերջնարդյունքների հետ,
2. սովորողի համար և նրա հետ տվյալ թեմայի (խնդրի) սցենարի ձևակերպումը, որում շեշտվում են մտածողության, քննարկման, հետազոտական և ուսուցման տեսակները մտագրոհներով,
3. հիմնահարցի ներկայացումը, այն է՝ ինչ ընդգծումների անհրաժեշտություն կա տվյալ թեմայի (բաժնի) քննարկման մեջ,
4. հետազոտական աշխատանքը:

ՀՀՈւ-ում ներառվում է նաև ուսանողի հետազոտական աշխատանքի հմտությունների ձևավորումը: Վերջինս ընդգրկում է՝

- հիմնահարցի ձևակերպումը,
- տվյալ հարցի շուրջ իմացությունը,
- ի՞նչ լրացուցիչ ինֆորմացիայի կարիք ունեն ավելին իմանալու համար, ո՞ր սկզբնաղբյուրներից կարող են օգտվել այն ձեռք բերելու համար,
- դասախոսի օգնությամբ նրանք կողմնորոշվում են ուսումնասիրելու այն նյութերը, որոնք կօգնեն լիարժեք ճանաչելու պրոբլեմը,
- սովորողները ներկայացնում են նյութը (օրինակ՝ պաստառով)՝ շեշտավորելով ի՞նչ նորույթ, լուծումներ ունի տվյալ խնդիրը, ի՞նչ հետագա ուսումնասիրությունների կարիք կա,
- գնահատում, որում ընգրկված են վերոբերյալ բոլոր ուսումնական գործիքները, նրանց արդյունավետությունը:

Հիմնահարցահենք ուսուցման արդյունավետությունը սերտորեն առնչվում է Բլումի տաքսոնոմիային [10]: Վերջինիս բովանդակությունն ուղղված է սովորողի մտային գործողությունների որոշակի հիերարխիայով ձևավորմանը: Բուրգի մտային կառուցում, որի «հարկաբաժիններն» են՝

1. հիշելը (remembering). իմանալ կամ հիշել տերմինաբանությունը, փաստերը, դասակարգումները, կատեգորիաները, ժամկետները, չափանիշները, մեթոդաբանությունը, սկզբունքները, տեսությունները և այլն: Օրինակ՝ սովորել և հիշել անոթաթրոմբոցիտար հեմոստազի առանձնահատկությունները,
2. հասկանալը (understanding). ներկայացնել սովորածը, համեմատություններ կատարել, նկարագրել, նշել հիմնական գաղափարները, օրինակ՝ նկարել անոթաթրոմբոցիտար հեմոստազի սխեման և համեմատել երկրորդային հեմոստազի հետ,
3. կիրառելը (applying). ձեռք բերված գիտելիքները կիրառել խնդիրներ լուծելու նպատակով, բացահայտել կապերը, օգտագործել ստացած գիտելիքները, օրինակ՝ բացատրել, թե ինչպես կփոխվի անոթաթրոմբոցիտար հեմոստազը Վիլեբրանդի հիվանդության և հեմոֆիլիա A-ի դեպքում,
4. վերլուծելը (analyzing). առանձնացնել ինֆորմացիայի բաղադրիչները, հայտնաբերել նրանց միջև կապերը, կատարել եզրակացություններ, օրինակ՝ կարելի է առանձնացնել առաջնային հեմոստազի առանձին բաղադրիչները, ցույց տալ նրանց միջև կապերը,
5. գնահատելը (evaluating). գնահատման միջոցով կատարվում են դատողություններ, ներկայացվում է սեփական պատկերացումը: Օրինակ, դասի ընթացքում քննարկվում է, թե ինչ նշանակություն ունի հեմոստազի համակարգը պրակտիկ բժշկի համար, ինչքանով է այն կիրառվում, և ինչպես են ազդում միմյանց վրա հեմոստազի համակարգի առանձին բաղադրիչները,
6. ստեղծագործական մոտեցումը (creating). ձևավորել կառույց տարբեր տարրերից, ցույց տալ կապը տարրերի միջև՝ ներառելով կապի յուրահատկությունը, կիրառելիությունը և համակարգի բաղադրիչների փոխհարաբերությունները: Օգտագործել և սինթեզել միմյանց նման բաղադրիչները: Վերոբերյալ քայլերով վերջնարդյունքում ձևավորվում է

նյութի ընդհանրական բովանդականությունը, պատճառահետևանքային կապերը: Օրինակ՝ իմանալով (հիշելով), հասկանալով, կիրառելով, վերլուծելով, սինթեզելով կարելի է ներկայացնել անոթաթրոմբոզիտար հեմոստազի սեփական սխեման:

Բլումի տաքսոնոմիայում կարևորվում են հուզական բաղադրիչները, մասնավորապես՝

- Ընկալումը. ուսանողի ուշադրությունը: Առանց այս բաղադրիչի անհնար է դառնում ուսուցումը: Այն ակտիվացնում է ուսանողի հիշողությունը, ճանաչումը, տարբերակումը, ընտրությունը և այլն:
- Պատրաստակամությունը (մտավոր, ֆիզիկական, հուզական, մոտիվացիոն). բացատրում է, շարժվում, ցույց է տալիս պատրաստակամություն, նպաստում է մտածելակերպի ձևավորմանը:
- Գնահատումը. ուսանողը ստացած գիտելիքը կապում է տարբեր արժեքների հետ:
- Կազմակերպումը. ուսանողը մշակում է սխեմաներ, թե ինչպես սովորել:
- Բնութագրումը. ստացած գիտելիքները կիրառվում են համապատասխան ոլորտում:

Տեսական առարկաների դասավանդման գործընթացում Բլումի տաքսոնոմիայի և ՀՀՈւ-ի կիրառումը դառնում են ուսանողակենտրոն ուսուցման հենակետը, որում առաջնահերթ են՝

- գիտելիքի իմացության առանձնահատկությունները,
- տերմինաբանության իմացությունը,
- կոնկրետ փաստերի իմացությունը,
- գիտելիքի ձեռքբերման ուղիների և միջոցների առանձնահատկությունները,
- օրինաչափությունների իմացությունը,
- գիտելիքների միտումները և հաջորդականությունները,
- գիտելիքների դասակարգումը և չափանիշները,
- իմացության չափանիշները,
- իմացության մեթոդաբանությունը,
- գիտելիքի համընդհանուր դաշտը և կիրառումը,
- իմացության սկզբունքները և ընդհանրացումները, մեթոդաբանությունը,
- տեսությունները և կառույցները:

Վերոբերյալ ռազմավարությունը կօգնի ուսանողին հաջողակ հետավարտական գործունեություն ծավալելու և ցկյանս ուսումնառության անհրաժեշտությունը գիտակցելու համար:

Կլինիկական առարկաների ուսուցման պրոցեսում սովորողները կբացահայտեն տեսական ամբիոններում իրենց գիտելիքների պակասը, թերի լինելը, մասնավորապես «Ֆիզիոլոգիա», «Անատոմիա», «Ֆարմակոլոգիա», «Միկրոբիոլոգիա», «Ախտաֆիզիոլոգիա» առարկաներից:

PBL – մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում կապ հաստատելու, ինտեգրելու տարբեր առարկաներից ստացած գիտելիքները, հասկանալու և մեկնաբանելու հիվանդի գանգատների գիտական հենքը, ինչպես նաև հիվանդությանն առնչվող ախտանշանները, լաբորատոր տվյալները, մատնանշելու տվյալ դեպքի, ախտի հոգեսոցիալական թողարկիչները: Այն ուսանողին հուշում է ձեռք բերելու գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են կլինիկական դեպքերը ճիշտ ըմբռնելու և մեկնաբանելու, անհրաժեշտ բուժում կազմակերպելու համար: Պատկերավոր ասած՝ Բլումի տաքսոնոմիան և հիմնահարցահենք ուսուցումը սովորողի ուղիղ ճանապարհն է ուսանողական նստարանից դեպի հիվանդի մահճակալ (from bench to bedside)՝ դառնալով կրթության որակի բարեփոխման ինստիտուցիոնալ գործիք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Armstrong R. J., Patricia A., “Bloom’s Taxonomy”, Vanderbilt University Center for Teaching. Vanderbilt University. 2010, 25 (9), p.25
2. Bloom B. S.; Engelhart, M. D.; Furst, E. J.; Hill W. H.; Krathwohl, D. R. Taxonomy of educational objectives: The classification of educational goals. Handbook I: Cognitive domain. New York: David McKay Company. 1956, p.79-144.
3. Bloom B.S.: “The idea for this classification system was formed at an informal meeting of college examiners attending the 1948 American Psychological Association Convention in Boston. At this meeting, interest was expressed in a theoretical framework which could be used to facilitate communication among examiners”. 1956, p. 4.
4. Bloom B.S., Taxonomy of educational objectives: The classification of educational goals. Handbook I: Cognitive domain. New York: David McKay Company. 1956, p. 201.
5. Dave R. H., Armstrong, R. J., Developing and writing behavioral objectives. Tucson: Educational Innovators Press. 1975, p.25-33
6. Fadul J. A., Collective Learning: Applying distributed, The International Journal of Learning. 2009, 16 (4): 211–220
7. Clark R., Donald R. «Blooms Taxonomy of Learning Domains», 2014, p. 105-124
8. Hoy A., Anita W. Educational psychology, 2007, 10th ed., Boston, pp. 530–531, 545
9. Keeneth J.; Colvin J.; Sissons J., “Mapping student information literacy activity against Bloom’s taxonomy of cognitive skills”, Journal of Information Literacy, 2010, p.6-21
10. Kress G.; Selander, S. “Multimodal design, learning and cultures of recognition”. Internet and Higher Education. 2012, 15 (1): p.265–268

11. Paul R., Critical thinking: what every person needs to survive in a rapidly changing world, 1993, (3rd ed.), p.201
12. Shane J., Harold G., "Significant writings that have influenced the curriculum: 1906-1981". Phi Delta Kappan. 1981,62 (5): p.311–314.
13. Elizabeth J., Simpson A.,. «Educational objectives in the psychomotor domain», Journal of Home Economics. 2018, 10 (4): p.110–144
14. Vygotsky L. S. «Interaction between learning and development». Mind in society: the development of higher psychological processes. Cambridge, Massachusetts: Harvard University Press. 1978, Chapter 6, pp. 79–91

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ТАКСОНОМИИ БЛУМА И ТЕХНОЛОГИИ ПРОБЛЕМНОГО ОБУЧЕНИЯ В ПРЕПОДАВАНИИ ТЕОРЕТИЧЕСКИХ ПРЕДМЕТОВ

Навасардян Г.А., Погосян М.А.
Учебно-методический совет теоретических предметов ЕГМУ

Ключевые слова: *проблемное обучение, новые идеи, ориентированность на учащихся*.

Данная стратегия поможет студенту вести успешную постдипломную деятельность, осознать необходимость обучения на протяжении всей жизни. В процессе обучения клинических дисциплин студенты смогут выявить недостаток знаний теоретических кафедр, в частности по предметам «Физиология», «Биохимия», «Анатомия», «Фармакология», «Микробиология», «Патофизиология». PBL – методология дает возможность связать знания, полученные по разным предметам, понять и интерпретировать научную основу жалоб пациента, а также симптомы, связанные с заболеванием, лабораторные данные, указать психосоциальные триггеры конкретной болезни. Подобный метод дает возможность студенту приобрести знания, необходимые для правильного понимания, итерпретации и лечения клинических случаев. Образно говоря, таксономия Блума и проблемное обучение – прямой путь от студенческой аудитории к койке пациента (from bench to bedside), становящийся институциональным инструментом для реформирования качества образования.

SUMMARY

FEATURES OF USING BLOOM'S TAXONOMY AND PROBLEM-BASED EDUCATIONAL TECHNOLOGIES IN THE TEACHING OF THEORETICAL SUBJECTS

Navasardyan G.A., Poghosyan M.A.

Keywords: *problem-based learning, new ideas, student-centred*

The strategy will help the student to have a successful postgraduate activity, to realize the need for lifelong learning. In the process of clinical subjects learning, students will reveal the lack of knowledge in theoretical departments, in particular, in the subjects of "Physiology", "Anatomy", "Pharmacology", "Microbiology", and "Pathophysiology". PBL is the methodology, which provides an opportunity to apply the knowledge gained from different subjects, to comprehend and interpret the scientific basis of a patient's complaints, as well as the symptoms related to the disease, laboratory parameters, to show the psychosocial triggers of the disease.

It motivates students to acquire knowledge to correctly understand, interpret and organize treatment. Figuratively speaking, Bloom's taxonomy and problem based learning is the direct pathway of the learner from bench to bedside, becoming an institutional tool for reforming the quality of education.